

1638

ԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

արդյունք 17/10/40
6/11/40

ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐԱԿ III

809

V-22

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՍՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՎՐՈՊԱԿԱՆ

1940

12 OCT 200

809/

Մ-22 ՍԿ.

Հ. ՄԱՍԻԿՈՆՅԱՆ

W

ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՊՐԱԿ III



16 ՅԵՎ 17-րդ ԴԱՐԵՐԻ ՍՊԱՆԱԿԱՆ ՅԵՎ ՓՈՐԹՈՒԳԱԼԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հնդկաստանի ծովափին ճանապարհի և Ամերիկայի հայտնա-
գործումը հսկայական ազդեցություն դրածը Արևմտյան Յիվրո-
պայի տնտեսական կյանքի վրա: Առևտրական ճանապարհների
տեղաշարժը դեպի Ատլանտյան ովկիանոս այն հետևանքն ունե-
ցավ, վոր խորապես ազդեց Իտալիայի և Գերմանիայի տնտեսա-
կան կյանքի վրա: Իտալիան և Գերմանիան աստիճանաբար
յերկրորդական նշանակություն ունեցող յերկրների շարքն ան-
ցան, իսկ նրանց փոխարեն սկսեցին աստիճանաբար դեր խաղալ
այն յերկրները, վորոնք ընկած էին Ատլանտյան ովկիանոսի
ափերին—Սպանիա, Փորթուգալիա, Մեզիկա, Ֆրանսիա, Նիդեր-
լանդներ:

Բայց Ամերիկայի և Հնդկաստանի ծովափին ճանապարհի
հայտնագործումը յեկրորդական տարբեր յերկրների վրա տարբեր
ազդեցություն դրածը: Մինչդեռ Մեզիկան և Ֆրանսիան աստի-
ճանաբար զարգանալով դարձան արդյունաբերական յերկրներ,
Սպանիան կարճ ժամանակամիջոցում վտակու և արժաթի հսկա-
յական պաշարներ կուտակելով, վորոշ ժամանակ աստիճանաբար
անդ զբաղեց, իսկ հետո, 17-րդ դարի սկզբին, նույնպիսի արա-
գումբ դարձավ: Յերկրորդական նշանակություն ունեցող յի
պետություն:

Սպանիայի այդ արան վերելքի և նույնքան արագ անկ-
ման պատճառը հետևյալն է:

Յերկ հայտնագործվեց Ամերիկան, այնուհետ ներթուփեցին
դանազան տիպի բախամիտություններ: Ամերիկայի նվաճման և թա-
լանի մեջ շատ ակախվ գեր եր խաղում նաև սպանական ազնվա-
կանությունը: Մի քանի տարվա ընթացքում այդ ազնվականու-
թյունը դաժան պատերազմներ եր ձգում արաբները դեմ, ապ-



570-49

րում եւ թալանով և սպառնալով, իսկ ուրիշ տիպի աշխատանքները համարվում էին ոտորացուցիչ մի բան: Սպանական իշխող դասակարգերի ձեռքում կուտակվեցին թանկարժեք մետաղների հսկայական պաշարներ:

Սկզբնական շրջանում Ամերիկայից և Հնդկաստանից համարժեք փողերն ընդ միայն հարստացրեց սպանական ազնվականությունը և վաճառականներին, այլև բարենպաստ ազգեցություն: զործեց արդյունաբերության վրա: Սեմիլյան վաճառականները Նոր Աշխարհի հետ առևտուր անելու մենաշնորհն իրենց ձեռքը վերցնելով հսկայական հարստություն կուտակեցին: Տուլզոն և Մեդոլի քաղաքներում բովանդակվում էին թափով դարձած արծաթի արդյունաբերությունը:

Սպանիայի հաւաքակալական-քաղաքական կյանքի դարդացման առանձնահատկությունները մեկն էլ այն էր, լուր յերկրի ներքում արդյունաբերության դարդացումն այնպիսի թափ չըստացավ, լուր կարողանար արժատական հեղաշրջում առաջացնել Սպանիայի անտեսական կյանքում:

Վոսկու և արծաթի համաշխարհային համաժամ, ստորադասի պաշարի 64 տոկոսը կուտակվեց Սպանիայում և Սպանիան ընկնելով պատրաստի վոսկու հետեից և նրանով պատրաստի ապրանքներ ներմուծելով, իր յերկրի ներքում չդարգացրեց արդյունաբերությունն ու արդյունաբերական տեսակետից մնաց ամենահեռամասը: Այդ իմաստով կարելի չէ ասել, լուր շատ փողեր ունենալը դարձավ Սպանիայի անկման ամենահեշտական պատճառը:

Դսերի անկումը և սեփական յերկրում արդյունաբերությունը չզբաղվելը յերկրին կանգնեցնում և ծայրահեղ չքավորություն առաջ:

Մարքան իր «Հեղափոխական Սպանիան» հողվածում այսպես և բնութագրում սպանական կյանքի այդ հակասությունները:

«Յեթե կարլոս I-ի թագավորությունից հետո Սպանիայի քաղաքական և անտեսական անկումը դրսևորում էր դանդաղ քայլ-քայլան րդուր նողկալի նշանները, լուր հիշեցնում էր տաճկական իմպերիայի ամենավատ ժամանակները, այնուամենայնիվ այդ թագավորի ժամանակ նախկին ազատությունների աճյունը հանդգնում էր համենայն դեպս փառահեղ դամբարանի մեջ: Այդ այն ժամանակն էր, յերբ Վասկո Նունյես Բալբոան Կաստիլիայի

կրոնիկը կանգնեցրեց Դարիենայի ավերին, Կորտեռը՝ Մեկսիկոյում, Պիսարոն՝ Պերույում: Այդ այն փամանակն էր, յերբ Սպանիայի ազգեցությունն անբաժանելիորեն իշխում էր Յեկրոպայում, յերբ Եղորադույի շրջուցիչ տեսիլները, ասպետական քաղաքործությունների և համաշխարհային միապետության տեսիլները կուտացնում էին երկրագործների վրա յերեւակալությունը: Սպանիայի ազատությունն անհետացավ... բայց չորս կողմից հոտում էին փողեր հեղեղները, շառաչում էին սրերը և չաքաղաշարներն յացկառում էին ինկվիզիցիայի յարույթների հրացուքերը»^{*)}:

Հաւաքակալական և քաղաքական կյանքի ճշմարտան Սպանիայում ավելի չէ յորոշում, յերբ Սպանիայի և Մեքսիկայի պայքարը համաշխարհային առաջնության համար վերջանում է Սպանիայի պարտությունը: Կործանվում և «Հաղթական Արեալան» (1588 թ.), իսկ ցամաքում սպանացիները պարտվում են Ֆրանսիայի դեմ մղվող կռիվների մեջ: Ազատություն սկսվում և սարսափելի ուժակցիա: Յեկեղեցին գոռնում և «աքսոյությունից ամենասարսափելի զործիքը» (Մարքս) և հանդես է գալիս վերստին ամենաուժեղիտն ուժը: Սունկի նման աճում են վանքերը և մենաստանները (10 հազար): Թագավորի հետորտնը դառնում է «սրբազան ինկվիզիցիան»: Ինկվիզիցիոնները նշանակվում էին թագավորի կողմից: «Հերետիկոս» տեսելով սեփեցին հասկանալ ամեն մեկին, ով իր դժգոհությունն էր հայտնում թագավորական յշխանությունից: Ինկվիզիցիայի ձեռքն ընկած մարդիկ կենդանի չէին մնում: «Հերետիկոսների» սենեկվածքը կոնֆիսկացիայի յեք յենթարկվում, իսկ ինքը, «հերետիկոսն» ամենածանր տանջանքներից հետո յարույլ էր բարձրացվում և կենդանի այրվում:

Բուրբուլին դարմանալի չէ, լուր այս «հերետիկոսների» հետ միասին պեաք և հալածվելին նաև հումանիտաները և հումանիտական շարժման ամեն մի արտահայտություն:

Յեկեղեցու և ինկվիզիցիայի պայքարն ուղղված էր նախ այն մարդկանց դեմ, ովքեր Սպանիայում այս կամ այն ձևով տարածում էին յաւալական հումանիզմի և դեմոկրատական

^{*)} Маркс и Энгельс, Собр. соч. т. X, стр. 720-721.

Ֆորմացիայի վորոշ սկզբունքները: Հումանիտական գրականու-
թյան հակառակ, յեկեղեցին հովանավորում էր կրոնական-միա-
տիկական գրականությունը:

1. ԱՍՊԵՏԱԿԱՆ ՎԵՊԸ

16-րդ դարի Սպանիան սովորաբար համարվում է առաջնա-
տական գրականության ամենակրթակ յերկրներից մեկը: Յեվ
խնկապես այդ դարի Արևմտյան Յեվրոպայի վոշ մի յերկրում
առաջնական գրականությունը և մասնավորապես առաջնական
վեպը այնպիսի լայն տարածում և զարգացում հասնում, ինչ-
պես Սպանիայում: Առաջնական վեպը Ֆրանսիայից Սպանիա
յե անցել ղեսեն 13-րդ դարում: Բայց առաջնական վեպը բարձր
զարգացման հասավ 16-րդ դարում և պետք է նշել, վոր առաջն-
ական վեպերի սպանական հեղինակները շատ կողմերով ղերա-
գանցեցին իրենց բոլոր նախորդներին: Ճիշտ և, սպանական առ-
աջնական վեպերի յեղակետը հայտնի «Կլոր սեղանի ապստոների»
վիպաշարն էր, բայց Սպանիայում առաջնական վեպերը ստա-
նում են մի շարք նոր առանձնահատկություններ:

Սպանական առաջնական վեպերի մեջ լայն համբավ ունե-
ցին հատկապես յերկուսը: Նրանցից մեկը կոչվում էր «Ամադիս-
ների» սերիա, վորի բաղկացած էր 12 մասից և լույս տեսավ
1508—1546 թ. թ. շրջանում: Իսկ մյուսը հայտնի յեր «Պալմե-
րիաների» սերիա անունով: Այս սերիան բաղկացած էր 6 մասից
և լույս տեսավ 1511—1547 թվականներին: Այս վեպերը կարճ
ժամանակամիջոցում ստացան համերոպական հռչակ և թարգ-
մանվեցին մի շարք լեզուներով: Մեծ հաջողությամբ կարդաց-
վում էր հատկապես «Ամադիս Գադիացի» վեպը: Յենթադրվում
է, վոր այդ վեպը գրվել է 14-րդ դարում, Փորթուգալիայում:
15-րդ դարում նա թարգմանվել է յեվրոպական մի շարք լեզու-
ներով և որինակ է ծառայել սպանական այդ սերիայի բոլոր
վեպերի համար: «Ամադիս Գադիացի» սպանական վարիանտի
ամենահին հրատարակությունը վերաբերվում է 1508 թվին և
վերագրվում է մի վոմն ղե Մոնտավոյին: Բայց Մոնտավոն
վեպի վերջում հավատացնում է, վոր ինքը մշակել է մի ինչ վոր
ավելի հին ձեռագիր և ավելացրել է միայն հինգերորդ գլուխը:

Մոնտավոյի վարիանտի համառոտ բովանդակությունը հե-
տևյալն է.

Ամադիսը, վեպի կենտրոնական հերոսը, արտասովորական
կապերի ծնունդ է, ապրինի ղավախ Հայրը Գադիայի թագա-
վոր Պերին և, մայրը՝ Բրետանի իշխանուհի Ելիզենան: Քանի
վոր Ամադիսը ծնվում է վոշ որինական ամուսնությունից, այդ
պատճառով էլ մայրը «խայտարակությունը» ծածկելու նպատա-
կով յերեկոյին անհետացնում է, թողնելով ծովի ափին: Շոտ-
լանդիայի առեկաները գտնում են նրան, խնամում և ղապտա-
րակում առաջնական ավանդությունների համաձայն: Ամադիսը
մեծանում և Շոտլանդիայի արքունիքում: Այնուհետև սիրահար-
վում է Անդրիայի թագավորի աղջկա՝ իշխանուհի Որինեյի վրա:
Վեպում մանրամասն պատմվում է Ամադիսի արկածների և քա-
ջադործությունների մասին, վորումը Ամադիսը կատարում է ի
պատիվ իր սիրուհու—Որինեյի վերջում նկարագրվում է Ամա-
դիսի ամուսնությունն Որինեյի հետ: Նա ունենում է յերեկա-
ներ, թուներ և այդ բոլորի մասին գրվում են նոր առաջնական
վեպեր:

Ինչպես այդ վեպի, այնպես էլ սպանական մյուս առաջն-
ական վեպերի առանձնահատկությունն այն է, վոր թափառող
առաջնական արկածները նկարագրվում են ղաղութային կքապան-
սիայի ֆոնի վրա: Վեպի կենտրոնական հերոսն ապրեան է, այն
առաջնորդ, վորը սուրբ ձևերին թալանում է ղաղութային բնակ-
չությանը: Առաջնի մեջ այժմ այս կողմն և առաջ քաշվում է
շեշտվում:

Վորպես հետաքրքիր վառտ պետք է նշել, վոր հոգևորա-
կանության վերաբերմունքը ղեպի առաջնական վեպերը բացա-
սական էր: Հոգևորականությունը հալածում էր առաջնական վե-
պերի հեղինակներին և պահանջում արգելել այդ վեպերը, հատ-
կապես ղաղութներում: Այս յերեկոյթը բացատրվում է նրանով,
վոր սպանական առաջնական վեպերը կառված լինելով աղնվա-
կան շրջանների հետ, այնուամենայնիվ շոշափում էին հոգևո-
րականության ղահերը: Պետք է նկատի ունենալ նաև այն հան-
գամանքը, վոր սպանական առաջնական վեպերում վորոշ ար-
տահայտություն գտան նաև վերածնության ղարաշրջանի հովե-
րը: մի բան, վոր ղեր կարող գուր կալ հոգևորականությանը:

Բայց, չնայած այս կողմերին, սպանական ասպետական վեպերում արհեստական կողմեր շատ կային, հեղինակները հաճախ զուտ տալով իրենց ֆանտազիային, ստեղծում էին կեղծ վիճակներ: Ասպետական վեպերի այս կողմը ջախջախիչ քննադատության յենթարկեց Սերվանտեսը:

2. ԼՈՒԻՍ ԿԱՍՏՈՆՍ

(1525—1580)

Գրական մյուս ժանրը, վոր այդ դարաշրջանի Սպանիայում մեծ դարձացում ունեցավ, եպիքական պոեմն եր Սպանական եպիքական պոեմում մեծ մասամբ փառաբանվում եր նոր յերկրների հայտնագործումը վորպես հարստության աղբյուր:

Եպիքական պոեմի քիչ թե շատ նշանավոր ներկայացուցիչը 16-րդ դարի Սպանիայում համարվում ե Ալոնզո դե Երսիլիան, վորը հայտնի դարձավ իր «Արակուսաներ» պոեմով: Պոեմը գրված ե 1569 թվին, բայց լույս տեսավ ավելի ուշ: Յերբ արակուսանները հարձակվեցին (Չիլիում) սպանական հողերի վրա, Երսիլիան, վորպես կամավոր, մասնակցեց նրանց դեմ մղվող պատերազմներին: Իր պոեմում նա պատկերում ե սպանացիների մզած պատերազմները բնիկների (հնդկիկների) դեմ: Սպանացիները պոեմում բոլոր կողմերով իգեալականացված են: Նա միաժամանակ զիցաբանական տարր ե մտցնում իր պոեմի մեջ, նկարագրում ե զիցաբանական աստվածների, վորոնք ակտիվ մասնակցում են պատերազմին ե նրա ընթացքի վրա ազդեցություն են ունենում:

Սակայն եպիքական պոեմի ամենավառ արտահայտությունը մենք հանդիպում ենք Փորթուգալիայում: Փորթուգալիան իր ինքնուրույնությունը կորցնելու նախորդակին, մինչև Սպանիային միանալը (1581 թ.) տվեց մի շատ խոշոր գրող, վորը հանդիսացավ փորթուգալական առաջին ազգային վիպագրության ստեղծողը:

Լուիս Կամոնեսը հանդիսանում ե փորթուգալական ամենախոշոր ե միակ գրողը, վոր համերոպական անուն ստացավ: Նրա կյանքը ե գրական գործունեությունը վերաբերում ե այն դարաշրջանին, յերբ Փորթուգալիան դեռևս անկախ յերկիր եր

ե Յեվրոպայի կյանքում բավական ակտիվ դեր եր խաղում: Փորթուգալական ծովագնացներն այդ ժամանակ հայտնի էին ամբողջ աշխարհին: Բավական ե ասել, վոր նրանք կատարեցին այն, ինչ վոր չկարողացավ անել Կոլոմբոսը: Նրանք բացեցին Հնդկաստանի ծովային ճանապարհը՝ Կասկո-դե-Փամայի, բոլոր ժամանակների ամենախիզախ ծովագնացներից մեկի, գլխավորությամբ Յեվ ինչպես Սպանիան, այնպես ել Փորթուգալիան կարճ ժամանակամիջոցում հարստացավ: Լիսաբոնը դարձավ ամբողջ աշխարհի կենտրոնական քաղաքներից մեկը:

Բայց այս բոլորը շատ կարճ տևեց: Այդ փոքրիկ ժողովրդի համար այս մի գեղեցիկ բայց շուտանցուկ յերազ էր: Փորթուգալիան իր քաղաքական անկախությունը կորցնելու հետ միասին այլևս վոչ մի եյական դեր չխաղաց յեվրոպական կուլտուրայի ե գրականության պատմության մեջ:

Կամոնեսը ծնվել ե Լիսաբոնում, ազնվականի ընտանիքում: Ստացել ե հումանիտական կրթություն: Լավ ծանոթ ե յեղեղ անալիկ գրականությանը ե մասնավորապես իտալական վերածնության դարաշրջանի գրականությանը: Մինչև 1546 թիվն ապրել ե Լիսաբոնում, շատ մոտ ե յեղել պալատական շրջաններին ե գրել ե բաղձաթիվ բանաստեղծություններ: Հետո պալատական նոտրիզները հետևանքով Լիսաբոնից աքսորվել ե Մարոկկո: Յեղել ե զինվոր, մայրերի դեմ մղված պատերազմներից մեկում կորցրել ե աջ աչքը:

1551 թվին Կամոնեսը վերադառնում ե Լիսաբոն, բայց մի միջադեպի կապակցությամբ բանտարկվում ե: Բանտից ազատվում ե այն պայմանով, վոր հոժարակամ գնա Հնդկաստան: 1553 թվին Կամոնեսը մեկնում ե Հնդկաստան վորպես հասարակ, շարքային զինվոր: Հնդկաստանում մնում ե 16 տարի, վորից հետո վերադառնում ե հայրենիք (1570 թ.), իր հետ բերելով իր նշանավոր պոեմի ձևագիրը: Բացի այդ պոեմից, Կամոնեսի գրչին են պատկանում նաե բազմաթիվ բանաստեղծություններ, գրանց թվում նաե 336 սոնետ: Սակայն Կամոնեսը գրականության պատմության մեջ մտավ իր «Լուզիադաներ»*) պոեմով, վորը լույս տեսավ 1572 թվին:

*) «Լուզիադաներ» անուն տառացի ե Լուսա անունից, վոր ավանդության համաձայն յեղել ե փորթուգալացիների նախնի, նախահայրը: Լուզիադաներ—Լուսայի վորդերն էր:

Կամոնեանի ստեղծագործութեան հիմնական թեման վառ-
դե-Գրամայի երգիչիցիայի գովերգութեանն է: Հեղինակն իրեն
հիմնական նպատակն է դրել գրել մի այնպիսի վիպերգութեան,
վորն ունենա Համեմատի «Վաղխապետներն» և Վերգիլիոսի «Ենեա-
կանին» համասար արժեք: Նրա պոեմը գրված է այդ գործերի
ուժեղ ազդեցութեան տակ: Բայց Կամոնեանը կույր բնութիւնակող
չէ: Նա իր պոեմի թեման վերցրել է իր ժամանակի կյանքից,
նկատի չի ունեցել իր ճանապարհորդական փորձն ու գիտագու-
թյունները և սակզմը և Վերածննդական դարաշրջանի համար
վերին աստիճանի բնորոշ մի դարձ:

Պոեմի մեջ կան շատ եջեր, վորտեղ հեղինակը փառաբա-
նում է գաղութային հափշտակողական քաղաքականութեանը,
«անհավատներին» քրիստոնյա գարձնեկու պրակտիկան: Պոեմի
մեջ նկարագրված է հենց այդ դարաշրջանի գաղութային եր-
պանստի պատերազմները բնիկների դեմ:

Հեղինակը հպարտանում է նրանով, վոր այդ հափշտակո-
ղական քաղաքականութեան մեջ փորթուղացիները խաղում են
վճռական դեր, վոր նրանք իրենց պետութեան սահմանները լայ-
նացնում են: Հետո ինքը պարծենում է նրանով, վոր պատմում
է վոր թե հորինված հեքիաթ, այլ «մաքուր ճշարտութեան»:
«Յես պետք է յերկեմ այն հերոսների քաջագործութեանները,
վորանք հեռանալով Լուզիադաների արևմտյան սփերից, պատե-
րազմական վտանգների մեջ հանդես բերին գերմարդկային ուժ
և տարբեր ժողովուրդների մեջ հիմնեցին իրենց թաղավարու-
թյունը»:

Սակայն Կամոնեանը նույնպես պատկանում է ժամանակա-
կից բուրժուական հասարակութեանը հիմնող այն մարդկանց
թվին, վորոնք ամեն ինչ էյին, բայց վոչ սահմանափակ բուր-
ժուաներ: Կամոնեանի պոեմի մեջ արտահայտվել են նաև նրա
հումանիստական մի շարք սկզբունքները: Յեթե նա մի կողմից
գովաբանում է գաղութային հափշտակողական քաղաքականու-
թյունը, ապա մյուս կողմից նկատում է քննադատում է այդ
քաղաքականութեան մի շարք սովերոտ կողմերը: Նա նույնիսկ
վորոշ գեպքերում ուժեղ քննադատութեան է յենթարկում հարբա-
տանալու և վոսկի կուտակելու անհագուրդ տենչը: Նա նկարա-

գրում է վոսկու ուժը, վորը կործանո՞ւմ է ամեն ինչ, թշնամաց-
նում է բնիկներին, ալնիվ մարդկանց դարձնում է ստոր:

«Վոսկին գիտնականներն աչքին վարագույր է քաշում,
հաստատում է սրենքներ, այդ սրենքները մեկնաբանում է վո-
չընչացնում է, կեղծիքը ծածկում է ճշմարտութեան քողով»: Կա-
մոնեանը նույնիսկ նկարագրում է բնիկներին շահագործելու մի
քանի ամենավայրենի և վայրագ մեթոդներ և դատապարտում
է դրանք:

Նրա պոեմի բովանդակութեան այդ հակասութեանները
ցայտուն կերպով արտահայտվել են նաև ձևի մեջ:

Պոեմի ելական առանձնահատկութեաններից մեկն այն է,
վոր չնայած նա հիմնականում պեպիստական գործ է, այնուա-
մենայնիվ հեղինակն ոգտագործել է նաև անտիկ դիցաբանու-
թյունը:

Ինչպես Համերոսի և Վերգիլիոսի մոտ աստվածները բա-
ժանվում են յերկու խմբի, նրանցից մի մասը պաշտպանում է
ոգնում է կենտրոնական հերոսներին, իսկ մյուս մասը դեմ է
դուրս գալիս նրանց, այնպես էլ Կամոնեանի մոտ է: Վառիլ-դե-
Գրամային խանգարում է աստվածներից մեկը (Վալե) վախենա-
լով, վոր յեթե նա հասնի Հնդկաստան, ապա դրանով սովերի
տակ կաննի իր փառքը: Պոեմում հանդես են բերված նաև այլ
դիցաբանական աստվածներ—Սատուրնը, Յուպիտերը, Վեներան
Վուլկանը, Յուենոնը և այլն:

Դիցաբանական նյութի ոգտագործումը հսկերականութեան
կողմից առանձին դիմադրութեան չհանգիպեց: Հոգևոր դրաքն-
նությունը հայտարարեց, վոր չնայած այդ բոլորին, հեղինակը
հանգիստանում է բարի քրիստոնյա: Յեղ այդ ճիշտ էր: Անտիկ
դիցաբանութեան ոգտագործման հետ միասին Կամոնեանը մնում
էր վորպես քրիստոնեական գրող:

Պոեմի մյուս առանձնահատկութեանը համարվում է նրա
լիրիզմը: Հեղինակը չի բաժականանում միայն կատարվող գեպ-
քերի նկարագրութեամբ, նա արտահայտում է նաև իր վերաբեր-
մունքն այդ բոլորի նկատմամբ: Լիրիքական շեղումները հաճախ
բացասաբար են անդրադառնում պոեմի Փաբուլայի զարգացման
վրա, դանդաղեցնելով նրա համաշափ ընթացքը:

3. «NOVELA PICAREZCA».

Վերածնունդի դարաշրջանի Սպանիայում տարևադարձային վեպերից և կյանքական պոեմներից բացի, բավականին լայն տարածում գտան նաև յերկու դրակա ժանրերը՝ նրանցից մեկը հայտնի չե հավանաբար վեպ (պոստպոսիտիվիստական վեպ) անունով, իսկ մյուսը՝ պիկարոյական վեպ կամ նովելա պիկարեսկա:

Հովիտական վեպերին մենք հանդիպում ենք գեղեցիկ Նաուելայում՝ ի դեպ Սանտադարոյի «Արկադիա» (1549 թ.) վեպի: Սանտադարոյի ուժեղ ազդեցություն տակ է գրված սպանո-վորթուգրական գրող Մոնտեմայորի «Բիտնա» (1559 թ.) վեպը: Այս հովիտական վեպի կենտրոնական հերոսներն աշխատանքներ են, վորոնք հազնեղով հովիտի և գեղջկուհիների հագուստներ, զբաղվում են սիրային գործերով: Այստեղ իրականացվում է «հովիտների» կյանքը, ամենաիրականաբան դերով նկարագրվում է նրանց սերն ու յերջանիկ կյանքը: Բոլորն էլ զարգացած «հովիտներ են, կատարյալ բանաստեղծներ և յերաժիշտներ, վորոնք ամեն քայլափոխում կարող են հորինել գեղեցիկ սիրային լսանաստեղծություն կամ լիրիկական յերգ:

Հասկանալի չե, վոր հազուսաները փոխած աշխատանքները և աշխատանքները վոչ մի կտու չունեն հովիտների և գեղջկուհիների հետ, այստեղ փաստորեն իրականացվում էր աշխատանքային կյանքը: Այս «հովիտական» վեպերը հետագայում ջանքալի ընդառնություն յենթարկեց Սերվանտեսին իր նովելաներում:

Սպանական վերածնունդյան դարաշրջանի գրականության ամենահետադիմ յերևույթներից մեկը պիկարոյական վեպն էր կամ նովելան, վորը ստիպատական վեպի առաջացման և ձևավորման պատմության մեջ շատ խոշոր դեր խաղաց:

Պետք է նկատի ունենալ, վոր վոսիտ և արծաթի հալայական պաշարների կուտակումն աղանախան իշխող դոստալորների ձեռքին վոչ միայն չբարկավեց լայն մասսաների վիճակը, այլ ծանր ազդեցություն գործեց նրանց տնտեսական կյանքի վրա: Ընկնելով կառիտալիստական կուտակման դաժան վոլորտադրույթի մեջ, զրկվելով ֆիզիկական դոյությունը պահպանելու բոլոր միջոցներից, միլիոնավոր մարդիկ կանգնեցին ծայրահեղ չքա:

Վորթեթյան առաջ: Բարկան է նշել, վոր այդ ժամանակվա Սպանիայում պատմաբանները հաշվում են 150 հազարից ավելի մարդիկ: Հասկանալի չե, վոր ֆիզիկական գոյությունը պահպանելու համար նրանք պետք է գլխիկն ամեն մի միջոց: Խորամանկության, ճարտակության, գոյության, խարդախության: Այս այս տիպի մարդկանց Սպանիայում սկսեցին անվանել Pícaros, վոր նշանակում է ճարտակ, խարբրա, ինտրիկան, խորամանկ: Պիկարոյական նովելայի կենտրոնական հերոսը հենց այդ Pícaro-ն է, վորի անունով էլ կոչվում է այդ ժանրը:

Այս ժանրի ամենակատարի գործերից մեկը համարվում է «Տորմեդայի Լասարիլլոյի կյանքը», վորը լույս սևում 1554 թվին, Բալբարուսի Հեղինակը հայտնի չե:

Այդ նովելայում նկարագրված է Լասարիլլոյի կյանքի պատմությունը, սկսած նրա մանկությունից: Պատմությունը բնագրավում է Լասարիլլոյի ամենադժգոյությունը: Պատմողն ինքը Լասարիլլոն է: Նա յեղիկ է ջրադացողանի վորդի: Համախորհրդներն խարբրա համար հորն աքսորում են Տորմեդայի: Մայրը մնում մենակ և անսպասելի, յերբ լուծ է, վոր իր ամուսինը սպանվել է մավերի գետ մզված պատերազմներից մեկում, թե իր և թե վորդու գոյությունը պահպանելու նպատակով ամուսնանում է մավը Սեյիդի հետ: Լասարիլլոն իր նոր հորը սկզբում ծուռ աչքով է նայում, բայց յերբ տեսնում է, վոր նա մթերքներ է բերում, վերաբերմունքը փոխում է: Բայց Սեյիդը թե կնոջ է թե վորդուն կերակրելու համար ստիպված է լինում դոյություն անել: Վորի համար խիստ պատժվում է: Մայրը վորդու դոյությունը պահպանելու վոչ մի միջոց չունենալով, ստիպված է լինում Լասարիլլոյի համար աշխատանք վորոնել: Լասարիլլոն մտնում է ծառայության մի կույս մուրացիկի մոտ: Վորքեռ առաջնորդ: Այսպիսով սկսվում է Լասարիլլոյի արկածների պատմությունը, նա մի տիրոջից անցնում է մյուսին, ծառայում է բազմաթիվ մարդկանց մոտ և այս հնարավորություն է առիտ հեղինակին բնութագրելու այդ ժամանակվա աղանախան հասարակության գրեթե բոլոր խավերին և գոտակարգերին:

Առաջին մարդը, վորի մոտ Լասարիլլոն ծառայում է գառտիարակվում է մուրացիկն է: «Յիս չեմ կարող քեզ ապ վոչ վոսիկ և վոչ էլ արծաթ, — ասում է մուրացիկը, — բայց դրա փո-

խարեն յես քեզ խորհուրդներ կամ, թե ինչպես պետք է ապ-
րել: Նա Լասարիլլոյին սովորեցնում է, թե ինչպես պետք է վո-
դորմութ լուծ խնդրել և վողորմութ լուծ խնդրելու ինչպիսի ձևեր
ու տեսակներ կան: Բայց չնայած մուրացիկը լավ յեկամուտ է ու-
նենում, այնուամենայնիվ նա վերին աստիճանի ժլատ մարդ է և
Լասարիլլոյին միշտ քաղցած է պահում: Յեվ ահա այս հանգա-
մանքը սախում է Լասարիլլոյին դիմել բազմաթիվ խորաման-
կություններով: Նա մուրացիկի պարկից հաց և գողանում, դրամ
և գողանում: Մուրացիկն այդ բանը հասկանում է, բայց չի կա-
րողանում դողին հանցանքի մեջ բռնել:

Մուրացիկն ունի մի կավի աման, վորով միշտ գինի յե-
խում: Լասարիլլոյին նա միշտ դրամ է տալիս, վոր գնա իր
համար գինի գնի: Լասարիլլոն գինին գնելով մի քիչ խմում է,
մտածելով, վոր հաղով թե կույր մուրացիկն այդ նկատի Բայց
մուրացիկը հաշվելով, թե ինքը քանի կուտ խմեց, անմիջապես
հասկանում է, վոր մի քանի կուտ սխալա է, հետևապես Լասա-
րիլլոն է խմել: Լասարիլլոն դիմում է ուրիշ միջոցի: Նա կավի
ամանի տակ անցք է բացում և մոմով ձածկում: Այն ժամանակ,
յերբ կույրն սկսում է գինին խմել, նա բաց է անում անցքը և
բերանը պահում հանցքի տակ: Այս ճանապարհով նրան մի քա-
նի անգամ հաջողվում է գինի խմել, բայց յերբ մուրացիկը հաս-
կանում է, այնպես և կավի ամանը խմում նրա յիրեսին, վոր
խեղճ յերեսայի տառամները ջարդվում են: Լասարիլլոն իր հեր-
թին վորոշում է մուրացիկից վրեժ լուծել: Նա մուրացիկին միշտ
տանում է վատ և ցեխոտ ճանապարհով, ասում է թե՛ «տուռ
յե, թախ» այնտեղ, վորտեղ վոչ մի առու չկա: Մի օր ել կանգ-
նեցնելով մի պատի տակ, տում է, թե մեծ առու յե, ցտակիր:
Մուրացիկն ամբողջ ուժով ցտակելով կոչում է պատին և ուշա-
թափ վայր է ընկնում, իսկ ինքը՝ Լասարիլլոն փախչելով նոր
«տեր» է վորոշում:

Անցնելով Տոկոս, Լասարիլլոն ծառայութան է մտնում մի
քահանայի մոտ: Քանից պարզվում է, վոր այս քահանան ավելի
ժլատ է, քան թե մուրացիկը: Քահանան ասին ինչ, նույնիսկ
հացը, պահում է փակված արկիում, ինքը լավ ուտում է, իսկ
Լասարիլլոյին խորհուրդ է տալիս տառամքը միշտ դատարկ պա-
հել և աղոթել, վորովհետև այդ ոգտակար է:

Լասարիլլոն քաղցից այնպես է հյուժվում, վոր նույնիսկ
հրաժարվում է փախչելու մտքից, վորովհետև չի կարողանում
նույնիսկ կանգնել վորտեղ վրա: Դուրս և դալիս և վողորմութ լուծ
և խնդրում, բայց չեն տալիս: Վողորմութ լուծ տալիս են միայն
այն ժամանակ, յերբ վորեւ մեկին թաղում են:

«Չնայած յես յերբեք մարդկության թշնամին չեմ,—ասում
է Լասարիլլոն,—բայց թողման ծխակատարությունների մասին
այժմ ել մեծ հաճույքով եմ հիշում, վորովհետև այդ մեակի պեղ-
քնն հր, յերբ յես կարող եյի կուշտ ուտել: Ահա թե ինչու յես
ցանկանում եյի, կամ ազոթում ասածուն, վոր նա ամեն օր մեր
քաղաքացիներից մեկին տանի իր մոտ: Յերբ պատահում եր,
վոր քահանան հիվանդի մոտ աղոթում եր նրա առողջության
մասին, յես ի սրտե աղոթում եյի, վոր ասոված, վորքան հնա-
րավոր է, շուտ տանի նրան մյուս աշխարհը և հաղար անգամ
հայհոյում, եյի այն հիվանդներին, սվերի առողջանում եյին»:

Բայց քանի վոր մարդիկ ամեն օր չեյին մահանում, իսկ
Լասարիլլոյի ստամոքսը չեք կարող սրելով և շաքաթներով սպա-
սել, այդ պատճառով Լասարիլլոն դիմում է այլ միջոցի: Քահա-
նայի հացի արկը բացելու համար քանակի յե ձեռք բերում:
Քահանան նկատում է, վոր հացը շուտ է վերջանում և այժմ
սկսում է համբել՝ հացը Բայց Լասարիլլոն նոր միջոց է գտնում:
Նա սկսում է հացի կողքից ծակել և ուտել այնպես, վոր իբր թե
մուկն է կերել: Քահանան զայրանալով մկների վրա, նրանց
կերած մասը կորում է տալիս և Լասարիլլոյին, ասելով թե՛ «կեր,
մուկը մաքուր կենդանի յե»: Վախորկելով այդ բանից, Լասա-
րիլլոն սկսում է ավելի մեծ «ավերածություններ» կատարել:
Բայց վերջի վերջս բռնվում է հանցանքի մեջ, ծեծվում է հե-
ռացվում և ուղիստանքից:

Յերկար թափառելուց հետո հանդիպելով մի ասպետի, Լա-
սարիլլոն շատ է ուրախանում, վորովհետև նա լավ հաղնված է,
փողոցով քայլում է գրեթե բարձր պահած և հպարտ: Ասպետը
ճանոթանալով Լասարիլլոյի արկածներին հետ, նրան վերջնում է
կր մոտ ծառայության: Ամբողջ օրը թափառում են շուկայում,
լինում են յեկեղեղում: Հասկանալով, վոր Լասարիլլոն քաղցած
է, ասպետը հարցնում է, թե նա վորեւ բան կերել է այսօր:
«Վոչ,—ասում է Լասարիլլոն,—գիտ ժամը ութը չկար, վոր հան-

դիպեցի ձերդ գերագանցությանը: «Բայց յես արդեն նույն-
ճաշել եմ,—ասում ես ասպետը,—և այն որը, յերբ յես նախաճա-
շում եմ, չեմ ճաշում: Ելլ միայն ընթրում եմ»: Նկատելով, վար
ճաշելու հույսերը կործանվեցին, Լասարիլլոն քիչ և քիչ ար-
տասվի, բայց հիշելով, վոր գրպանում հացի կտորներ կան, հա-
նում եւ և սկսում ե մեծ ախորժակով ուտել: Ասպետը նկատելով
այդ, իր մոտ ե կանչում Լասարիլլոյին, հարցնում է. «Ի՞նչ ե
ուտում, ապա մի կտոր հաց վերցնելով նրանից, սկսում ե մեծ
ախորժակով ուտել, այնուհետեւ ժե՛ծ խնամքով հավաքում ե կըրծ-
քի վրա թափած փշրանքները և ուտում:

Հետեյալ որն առավոտյան ասպետը դուրս ե գալիս տնից
և կարգադրում ե սենյակը հավաքել, ջուր բերել և սպասել իրեն:
Յերկար սպասելուց հետո Լասարիլլոն, տանն ուտելու վոչինչ
չգտնելով, գնում ե վողորմություն խնդրելու: Յերկայան, յերբ
ասպետը հարցնում ե նրան, թե՛ ուր եր գնացել, Լասարիլլոն
անկեղծորեն պատմում և ամեն ինչ: «Յես ել քեզ յերկար սպա-
սեցի, բայց յերբ տեսա չես գալիս, ստիպված յեղա առանց քեզ
ճաշել: Դու լավ ես վարվել: Սովելի լավ ե վողորմություն խնդ-
րել, քան թե գողանալ: Բայց այնուամենայնիվ խնդում եմ այդ
մասին վոչ վոքի չասես, վորովհետեւ այդ բանը փարոզ ե սովեր
զցել իմ պատվի վրա»:

«Յես նստեցի աթոռի ծայրին,—պատմում ե Լասարիլլոն,—
և սկսեցի խժեռել հացն ու աղիքները և հոնքերի տակով նայում
եյի պարոնիս, վոր ագահությամբ նայում եր հացի կտորներին
և խողի վոտքին: Մեկ մտածում եյի նրան հյուրասիրել, բայց
հիշելով, վոր նա ճաշել ե, յես վախճում եյի, վոր նա չի ըն-
դունի իմ հրավերը: Վերջապես ասպետն գրոսնելով սենյակում
մտնեցավ ինձ և ասաց.—«Հավատացնում եմ քեզ Լասարիլլո, յես
չեմ հանդիպել վոչ մի մարդու, վորն ուտեր այնպիսի մեծ ախոր-
ժակով, ինչպես դու և հաղիվ թե՛ գտնվի վորեւ մեկը, վոր նա-
յի քեզ և ախորժակը չգրգռվի»: «Պարոն ասպետ,—պատասխանե-
ցի յես,—դժվար չի լավ վարպետ լինել, յեթե ունենա լավ գոր-
ծիք. հավատացնում եմ ձեզ, վոր հացը շատ բավե ե, իսկ խողի
վոտքն այնքան լավ ե տապակած, վորով նայի, թուքն ախպա-
ժան կհոսի...» «Ելլ ուրեմն խողի վոտք ե...» «Այո, ձերդ գերա-
գանցություն» «Այնպիսի մեծ խողի վոտքից լավ բան չկա»:

«Այդ դեպքում համը տեսե՛ք ձերդ գերագանցություն և կհամոզ-
վեք, վոր յես ճիշտ եմ ասում»—ասելով այս, յես նրան տվեցի
խողի վոտքը և մի քանի կտոր սպիտակ հաց: Նա նստեց վողորմ. և
խողի վոտքն սկսեց ուտել այնպիսի ախորժակով և ագահությամբ,
վոր հավանորեն հետ կթողներ ամեն մի շան...»:

Այսպիսով, դուրս ե գալիս, վոր փոխանակ տերը կերակրե-
լու ծառային, ծառան պետք ե կերակրել տիրոջը: Լասարիլլոն
չեր կարող այդպիսի մարդու մոտ յեղկար մնալ: Նա հեռանում ե
և նոր «տեք» վորոնում: Յերկար արկածներէջ հետո Լասարիլլոն
դառնում ե ջրկիր և վերջն ամուսնանում ե:

Այս պրոգայիկ վերջավորությունը չբավարարեց ընթերցող
լայն հասարակությանը: 1620 թվին լույս տեսավ այդ նովելա-
յի յերկրորդ մասը, վորը գրված ե այլ հեղինակի կողմից:

Յերկրորդ մասը հետաքրքիր ե միայն մի տեսակետից: Այս-
տեղ ցայտուն կերպով պատկերացված ե վոսկու դերն այդ ժա-
մանակվա սպանական կյանքում:

Բեռնակիր Լասարիլլոյին մի որ պատվիրում են մի մեծ
արկղ տանել մի աղջկա տուն: Արկղի մեջ նստած ե այդ աղջկա
սիրահարը: Լասարիլլոն իր աշխատանքի դիմաց մի քանի վոտ-
կի յե ստանում: Հետաքրքիր ե նրա դատողությունները վոսկու
մասին.—«Ո՛ր, վոսկի, իդուր չե, վոր մարդկության մեծ մասը քեզ
համարում ե աստված: Դու ամեն մի բարիքի աղբյուր և միա-
ժամանակ բոլոր թշվառությունների պատճառ: Դու բոլոր ար-
վեստների ստեղծող և նրանց կատարելագործող: Դու պատճառով
մարդիկ դիտություն են ձեռք բերում, մտքերը պաշտպանվում
են, խորտակվում են քաղաքների աճրոցները և նրանց փլատակ-
ների վրա կործանվում ու բարձրանում են թագավորները: Դու
պաշտպանում ես առաքինությունը և միաժամանակ կործանում
ես այն: Դու պաշտպանում ես աղջկա վողջատնությունը և միա-
ժամանակ կործանում ես այն: Զկա վոչ մի դժվարություն, վոր
շփոթեցնի քեզ, չկա վոչ մի տեղ, վորտեղ վոտք չգնես...»:

Պիկարոյական նովելայի առանձնահատկությունների հետ
ծանոթանալու համար անհրաժեշտ ե նկատի ունենալ նաեւ մի այլ
գործ, վորի հեղինակն ե Մառեո Ալեման: Նրա գործը կոչվում ե
«Դուստան դե Ալֆարաչեյի կյանքը» (1599 թ.):

Ճարուլան կառուցված ե նույն սկզբունքով—հերոսը ծա-



առյուծ և բազմաթիվ տերերի մաս և այդ հնարավորութիւնն և տալիս հեղինակին նկարագրելու այդ ժամանակվա բոլոր դասակարգերին և հասարակական շերտերին: Այստեղ նույնպէս վաւերացնում է պոռթկումը և վռնակը փիլիսոփայութիւնը հոկայական դեր և խաղում:

Գուամանն իր արկածային կյանքի հենց խառնուրդից շատ լավ հասկանում է, թե ինչ և նշանակում է ինչն աղքատ «Զբաւ» վորի խոշորագույն թշնամին նրա աղքատութիւնն է, բոլոր թըշվառութիւնների պատճառը: Մի այլ տեղ նա առնում է. «Զբաւ» վորը շրջանառութիւնից դուրս նկատված դրամ է, փողացի ցեխ, հարստի բեռնակիր... յեթե նա խոսում է, նրան չեն լսում, բոլորը խուսափում են նրան հանդիպելիս, յեթե նա խորհուրդ է տալիս—դատաւարւում են, յեթե նա հրաշքներ և գործում, մեղադրում են կախարգութեան մեջ, յեթե նա առաքինի յի, ուղնդում են, վոր խաբւրա յի...»:

Բոլորովին այլ է հարուստի վիճակը. «Նրա ամբարները լիքն են հացով, փախաները՝ գինով, կճաճները՝ յուղով, սընդակները վոսկով... Բոլորը նրան լավ են ընդունում, նրա հիմարութիւնները համարում են իմաստութիւն, խորամանկութիւն: Նը՝ շրջահայեցողութիւն, վառարութիւնը՝ չափավորութիւն, բթամտութիւնը՝ սրամտութիւն, չաղաիրատութիւնը՝ հասարակութիւնը, զրադեցնելու ընդունակութիւնը: Նրա բոլոր մեղքերը և սխալները ներվում են: Նրանից բոլորը վախենում են, վոչ վոք չի համարձակվի նրա ճանապարհին կանգնել: Իր բոլոր գործերի մեջ, ինչպէս դատավոր, այնպէս էլ քննողն ու վկան ինքն է: Նա ստիպում է կեղծիքն ընդունել ճշմարտութեան տեղ: Որեւէ, հասարակական կարծիքը, բոլորը նրա կողմն են, վորովհետեւ դրամը տաքացնում է աշխուժացնում և արշուներ... Առանց դրամի ժամանակին վոչինչ չի կարելի անել, առանց դրամի չի կարելի ապրել ըստ ցանկութեան, չի կարելի իրադրծել վոչ մի ցանկութիւն»:

Յերբ Գուամանն ընկնում է Հրոմ և դառնում է մուրացիկների ընկերութեան անդամ, այնքի յի խտացնում իր փիլիսոփայութիւնը վոսկու մոսին:

«Վոսկին ամեն ինչից բարձր է, բարձր է ճաշակից, անսովորութիւնից, շոշափելիքից, լսողութիւնից, հոտոցելիքից, բարձր

է բոլոր զգացմունքներից: Բոլորի մեջ ամենակարեւորը նրա դեղին վայլն է, նրա գեղեցկութիւնը... Ծախսելու համար վոսկին ունենալ, այդ չի նշանակում հաճույք ստանալ նրանից: Նրանից հաճույք կարելի չէ ստանալ վոսկն այն դեպքում, յերբ չափից շատ դրամ ունես և յերբ բոլոր զգացմունքները հրապուրված են նրանով... Տէր ասոված, ինչպէս է սիրում սեղմվում, յերբ գրտնում է կոպիկ չկա... Ինչպիսի հետեանքներ է ունենում դրամ չունենալը... Ինչպէս է սկսում ատել քո շրջապատը, նույնիսկ ամենասիրելի առարկաները, յերբ այդ բոլորը չես կարող գնահատել և ձեռք բերել»:

Պիկարոյական վեպն արմատապէս տարբերվում է ասպետական վեպից իր թեմայով, արտացոլման որակով: Պիկարոյական նովելայի արտացոլման որակը նոր ձևավորվող բուրժուական հասարակութիւնն է, քաղաքացիական հասարակութիւնն իր կոպիտ նյութական պրակտիկայով և եգոիստական շահերի բաշխումով:

Նյութական արժեքները, նյութական կյանքի նկարագրութիւնը մարդուն հավասարազոր նշանակութիւն է արժեք և ստանում: Պատկերացվում է, վոր մարդը մինչև կոկորդը խրված է այդ նյութական առարկայական աշխարհի մեջ, վորովհետեւ մարդու ինչն չլինելու հարցը կապված է այդ առարկաներից: Յե՛վ վոչ միայն այդ, մարդուն գնահատելու չափանիշը նույնպէս դարձել են այդ նյութական արժեքները: Մարդը վորոշ արժեք է բովանդակութիւն և ստանում այն չափով, վոր չափով ունի նյութական արժեքներ: Յեթե նա գուրկ է այդ նյութական արժեքներից, միեւնոյն է, ինչպիսի կարողութիւններով ու հատկութիւններով էլ ոժտված լինի, նա հավասար է գերույի: Զերոն վորոշ արժեք է ստանում, յերբ նրա առաջ դրվում է վորեւէ թվանշան, այդ թվանշանը նյութական արժեքներն են, վոսկին, սեփականութիւնը:

Մյուս կողմից, պիկարոյական նովելան ցույց է տալիս, թե ինչպէս մարդուն գնահատելու չափանիշը—սեփականութիւնը—մարդու իրական հատկութիւնները հանդես է բերում այլ լույսի տակ, աղավաղված ձևով: Հիմարը դառնում է խելոք, աղեղը՝ գեղեցիկ, կույրը՝ ձեռք և լսողութիւն, ծերը՝ յերիտասարդանում է: Ճիշտ այնպէս, ինչպէս դրամով կարելի չէ գնել հաց,

պանիր, ծխախոտ, աշնպես եւ զբամով կարելի յե գնել խնկր, տաղանդ, գեղեցիկութուն, վոտք, առաքինութուն, սեր, իրաւ վունք, մի խոսքով՝ ամեն ինչ:

Պիկարոյական վեպի հեղինակներն ըմբոստանալով ֆեոդալական կարգերի դեմ, ցույց տալով, վոր հին առաքնական դասակարգերն արդեն դուրս են մղվում պատմական բեմից, միաժամանակ չեն հաշտվում նոր ձեւովորվող բուրժուական հասարակութան հետ: Թե Լասարիլլոն և թե Գուսմանն իրենց անձնական շահից բացի ուրիշ վաճ մի շահ չեն ձանաչում, բայց չպետք է մոռանալ, վոր նրանց վաղջ պայքարը մի կտոր հացի համար է, վոր նրանք իրենց բոլոր խորամանկութիւններով ցանկանում են մի անկ դառնել արևի տակ: Յեւ նրանց վարքագծի մեջ վորքան եպիստոական, նյութապաշտական դժեք լինեն, վորքան եւ նրանք փիլիսոփային վտելու և տիպականութեան մասին, այնուամենայնիվ նրանց դժգոհութեան, բողոքի և ցատման մեջ արտայայտվում է լայն ժողովրդական-դեմոկրատական մասսաների բողոքն ու դատաւար բուրժուական հասարակութեան դեմ:

Պիկարոյական նովելլայի կատարած գերը ռեալիստական վեպի ձեւովորման պատմութեան մեջ շատ մեծ է: Յեթե նկատի չառնենք Բոկկաչիոյի «Ճիւղամետան», ապա ուղղակի պետք է ասել, վոր դա հենց առաջին ռեալիստական վեպն էր, նրա նախնական վարիանտը, վորը հետագայում վերամշակման յենթարկվեց մի շարք սեւալիստ պրոպոններէ մոտ:

Պիկարոյական նովելլաների որակիցիաներին մենք հանդիպում ենք նախ Սերվանտեսի մոտ, իսկ ավելի ուշ շրջանում Գեթոյի, Լեսսոթի, Ֆրիլինդի, Դյոթեյի և այլ գրողների մոտ:

4. ՍԵՐՎԱՆՏԵՍ

(1547—1616)

Միգել դե Սերվանտես Սաուլեգրան ծնվել է աղքատացած ազնվականի ընտանիքում: Հայրը յեղել և բուժակ: Նախնական կրթութիւնն ստացել է հայրենի քաղաքում (Ալկալա դե Ենարես), ապա սովորել է Սալամանկայի Համալսարանում: Այստեղ ստուգատիսիւն է փոխադրւած թշուռ և իրավաբանութիւն: Հա-

մալսարանը վերջացնելուց հետո քաղաքական պաշտոնով աշխատում է մի բարձրաստիճան հոգեւորականի մոտ, վորի հետ գնում է Իտալիա: Իտալիայում նա մատիկից ծանոթանում է իտալական վերածնութեան դարաշրջանի գրականութեանը, կուլտուրային և զբաղվում է անտիկ գրականութեան ստուգատիսիւնով: 1570 թվին թողնելով իրեն ատելի գրասենյակային ծառայութիւնը, անցնում է գինիւրական ծառայութեան:

Վորպես շարքային գինիւր մասնակցում է Լեպանտոյի հայանի ծովային պատերազմին, վորը վերջացավ տոճկական նավատորմի լիակատար կործանումով:

Այն նախ, վորի վրա յեր գտնվում Սերվանտեսը, կովի յե բռնվում տաճկական նովերից մեկի հետ: Նովի ամբողջ անձնակազմին դերի յեն վերցնում: Սերվանտեսը, վոր հայտնի յեր վորպես քաջ և անվախ գինիւր, այդ տոք կովի ժամանակ յերեք գնդակով վիրավորվում է և գրկվում է ձախ ձեւքից: Առողջանալով, նա մասնակցում է Նավարինի և Թուենիսի ճակատամարտերին և միայն 1575 թվին ազատվում է գինիւրական ծառայութեանից: Հայրենիք վերադառնալու ճանապարհին Սերվանտեսն ընկնում է ծովահենների ձեռքը և վորպես գերի փոխադրվում է Ալժիր: Սերվանտեսի մոտ գտնում են հանձնարարական նամակ, վոր տրված էր հրամանատարութեան կողմից: Այդ նամակից յեզրակացնում են, թե նա շատ հարուստ մարդ է, այդ պատճառով նրան գերութեանից ազատելու համար նշանակում են շատ մեծ գումար: Գերութեան մեջ նա մնում է մոտ հինգ տարի, մի քանի անգամ փորձում է փախչել, մասնակցում է դերիների ապստամբութեանը: Հարցաքննութեան ժամանակ իր վրա յե վերցնում ապստամբութեան ամբողջ պատասխանատվութիւնը, վորի համար դատապարտվում է մահվան: Բայց հաջողվում է կախաղանից խուսափել, իսկ 1580 թվին նրան հաջողվում է պահանջված գումարը վճարել և ազատվել գերութեանից:

Վերադառնալով Մադրիս, Սերվանտեսը վորոշ ժամանակով ծառայում է գինիւրական մասերում, վորոնք գործում ենին Փորթուգալիայի դեմ: Այս շրջանին է վերաբերում նրա սիրտ և ամուսնութեան պատմութիւնը: Այդ սիրտ հետ սովորաբար կապում են նրա առաջին հովիտական վեպը—«Գալատեան» (1584):

Այնուհետև Սերվանտեսը հրաժարվում է գլխավորական ծառայութ-
յունից և վերադառնում է զբաղվել միայն ստեղծագործական աշ-
խատանքով: Բայց շատով համոզվում է, վոր այդ աշխատանքով
զբաղվելու համար հարկավոր է ամենևին առաջ հոգալ նյութական
կարիքները: Անհրաժեշտ էր ոգնել նաև մորը և քրոջը, վորոնք
խրենց ամբողջ ունեցվածքը վաճառել էին Սերվանտեսին գե-
րությունից ազատելու համար:

Նրա գլխին կախված էր կարիքի և թշվառության դաժան
սուրը, նա ճակատագրական պայքար է մղել բառացիորեն մի
կտոր հացի համար: Նրա գրած զբամանները չեն վճարվում թառ-
րոնի, կողմից, տպագրված բանաստեղծությունների դիմաց ստա-
նում է չնչին գումար: Նա ստիպված է լինում Ամսթերդամ գնալու
մասին մտածել, վորը չի հաջողվում: Ստիպված է լինում ստանձ-
նել հարկահավաքի պաշտոն, վորը կառված էր շատ մեծ անա-
խորժությունների հետ: Բավական չէ, վոր ամիսներով աշխա-
տավորձ չեր ստանում, նրան մեղադրում են զեղծարարության
մեջ և բանտարկում: Բանտից ազատվելուց հետո իր և ընտանի-
քի գոյությունը պահպանելու համար դիմում է բազմաթիվ մի-
ջոցների և կատարում է ամեն տիպի աշխատանք, բայց միշտ
վերջանում է նրանով, վոր իր վիճակի մեջ վոչ մի փոփոխու-
թյուն չի կատարվում: Շատ ընտրոշ է մի այսպիսի փաստ:

1604 թվին Սերվանտեսն իր ամբողջ ընտանիքով բան-
տարկվում է: Դատական արձանագրությունների մեջ գրված է,
վոր նա մեղադրվում է նշանավոր սրբիկա և շառլատան Գասպար
Եսպերիտի սպանության մեջ: Սերվանտեսին և ընտանիքի ան-
դամներին շուտ ազատում են: Այդ ցույց է տալիս, վոր բան-
տարկությունը վոչ մի ուսուցիչ չուներ: Բայց հետաքրքիր է,
վոր այդ գործով պատասխանատվության կանչվածների մեջ վոչ
մի «նշանավոր» մարդ չկար, բոլորն էլ աղքատ էին և թշվառ:
Այդ թշվառներին պատասխանատվության կանչելով դատարանը
վորձել է, ինչպես ասում են, թող փչել հասարակության աչքին
և իսկական հանցավորին թաղցնել:

Բայց չնայած գոյության այս ծանր և դաժան պայմանե-
րին, Սերվանտեսը չի դադարում ստեղծագործական աշխատանք-
ներով զբաղվելուց: 1605 թվին լույս է տեսնում «Դոն-Վիստա»
առաջին մասը:

Բայց նյութական ծանր վիճակը նրան հնարավորություն
չտվեց յերկրորդ մասը շուտ վերջացնել: Յերկրորդ մասը լույս
տեսավ միայն 1615 թվին՝ հեղինակի մահից մի տարի առաջ:
1613 թվին Սերվանտեսը հրատարակեց նաև նովելաների մի
փոքրածու՝ Խրտուտիան Լուվելաներ՝ վերնագրով: Բայց վոչ
«Դոն-Վիստա» չտեսնված հաջորդությունը և վոչ էլ նովել-
յաների արտոգ տարածումը, նրա նյութական վիճակը չբարեկա-
վեցին: Սերվանտեսը մեռավ ծայրահեղ կարիքի մեջ, իր կնոջ
խնայի և գեանահատուկ անակում, 1616 թվի ապրիլի 23-ին:
Այդ նույն թվին նույն օրն Անգլիայում մահացավ մի այլ հան-
ձար՝ Վիլիամ Շեքսպիրը:

Սերվանտեսը հայտնի չէ գերագույնցապես իր «Դոն-Վիստ-
ա»-ով, ձեռք է, նրա լավագույն ստեղծագործությունը «Դոն-Վի-
ստան» է, նա հանդիսանում է ուսուցիչական մեծածավալ վեպի
հիմնադիրը, բայց Սերվանտեսը մեծ է նաև վորպես նովելիստ և
նա նովելայի պատմության մեջ նույնպես կատարեց այն դերը,
ինչ վոր ուսուցիչական վեպի պատմության մեջ: Սերվանտեսի
նովելաները հետաքրքիր են նաև այն տեսակետից, վոր նրանք
հանդիսանում են մի տեսակ բանալի «Դոն-Վիստա» հասկանա-
լու համար և հնարավորություն են տալիս ավելի ճիշտ ըմբռնե-
լու Սերվանտեսի հասարակական-քաղաքական հայացքները և
նրա կատարած հսկայական դերը վերածնության դարաշրջանի
հումանիզմի պատմության մեջ:

Յերբ լույս տեսան Սերվանտեսի «Խրտուտիան նովելանե-
րը», նա 64 տարեկան էր և արդեն մեծ համբավ ունեցող գրող:
Արդեն լույս էին տեսել նրա «Գալատեայի» առաջին մասը
(1585 թ.), նա գրել էր մոտ յերեսուն կոմեդիաներ և ինտերմե-
դիաներ, վորոնք մեզ չեն հասել, լույս էր տեսել «Դոն-Վիստա»
առաջին մասը (1605 թ.):

Նովելաներից հետո նա հրատարակեց «Ճանապարհորդու-
թյուն դեպի Պառնաս» (1614 թ.), ութ կոմեդիա և ինտերմեդիա
(1615 թ.), «Դոն-Վիստա» յերկրորդ մասը (1615 թ.): Նրա մա-
հից հետո հրատարակվեց «Պերսիլեսի և Սիլվանուսի» փոքրու-
թյունները՝ վեպը (1617 թ.): Բացի այդ, Սերվանտեսի զբաղե-
րի քանի հայտարարություններից մեզ հայտնի չէ, վոր նա միա-
փամանակ գրել և պատրաստել է տպագրության «Գալատեայի»

յերկրորդ մասը, «Մի շարաք պարտեգում» Ժողովածուն, «Աչքա-
կալութիւն» կոմիդիան և մի ստեղծագործութիւն՝ «Փառաբան-
ված Բերնարդոն» խորագրով:

Այսպիսով Սերվանտեսի թողած գրական ժառանգութիւնը
կարելի չէ բաժանել յերեք մասի.

ա) վեպեր, բ) նովելաներ, գ) կոմիդիաներ և ինտերմե-
զիաներ ու մի քանի բանաստեղծութիւններ, վոր նա գրել է
դանազան ժամանակներում:

«Խրատական նովելաների» առաջին հրատարակութեան մեջ
(1613 թ.) Սերվանտեսը գետեղել է 12 նովելա: Նովելաներին
կցված է առաջաբան, վորտեղ Սերվանտեսն այսպես է բնորոշում
իր Ժողովածուն՝ նշանակութիւնն ու արժէքը. «Յես նովելաներն
անվանել եմ խրատական, և իսկապես, յեթե ուշագործվածը նա-
յեք, կտեսնեք, վոր նրանց մեջ չկա վոչ մի նովելա, վորեց կա-
րելի չլինի հանել վորեւս ոգտակար և խրատական յեղրակացու-
թիւն, յեթե տարածվելու վախը չլիներ, քեզ ցույց կտայի, թե
ինչպիսի ոգտակար և համով սնունդ կարելի չէր վերցնել ինչ-
պես բոլոր նովելաներից միասին վերցրած, այնպես ել ամեն մի
առանձին նովելայից» *): Մի քիչ հետո կարդում ենք՝ «Յես հա-
մարձակվում եմ ասել, վոր յեթե այս նովելաների ընթերցումը
վորեւս ձեռով իմ ընթերցողների մեջ կարժնացնի վատ ցանկու-
թիւններ և մտքեր, յես մեծ հաճուքով կհամաձայնվեյի կտրել
այդ նովելաները գրող ձեռքս, քան թե կհրատարակեյի»: Հետո՝
«Բացի այդ, յես յենթադրում եմ, վոր յես առաջինն եմ, վոր գրե-
ցի նովելաներ կաստիլական լեզվով, վորովհետեւ մեզ մոտ հրա-
տարակվող բազմաթիվ նովելաները թարգմանված են ոտար լե-
զուներէից, այն ժամանակ, յերբ իմ նովելաները—իմ լիակատար
անվականութիւնն են: Գրելով այդ նովելաները, յես վոչ վոքի
չեմ ընդորինակել և վոչ վոքից վոչինչ չեմ գողացել: Նրանք ծըն-
վել են իմ հոգում, լույս աշխարհ են յեկել իմ գրչի միջոցով և
այժմ նրանք պետք է անեն ու անեն տպագրական մեքենայի
գրկում» **):

* J. Miquel de Servantes Saavedra, «Нашидательные новеллы», 1935
М.—Л. т. I, стр. 5.

** Նույն տեղ, էջ 6:

Սերվանտեսը շատ լավ ծանոթ է յեղել և խալական նո-
վելային, և՛ տրիարոյական նովելային, և՛ առհասարակ գրական
այն բոլոր ժանրերին, վորոնք նովելայի պատմութեան մեջ հըս-
կայական դեր են խաղացել: Ընդո են այն բոլոր սերվանտեսա-
գետները, վորոնք ասում են, թե Սերվանտեսի նովելաները օգե-
տորեն կապված են սպանական և համաշխարհային նովելայի
լավագույն նվաճումների հետ, վոր նրա նովելաները հանդիսա-
նում են այդ գրական նվաճումների լավագույն սինթեզը: Բայց
Սերվանտեսն ոգտագործելով այդ բոլորը, ստեղծել է միանգա-
մայն ինքնատիպ մի գործ, նա միանգամայն նոր խոսք է ասել
նովելայի պատմութեան մեջ, և այդ խոսքն այնպիսին է, վոր
չի կարելի հաշիւ չառնել:

Սերվանտեսն իր նովելաների մեջ շոշափում է բազմաթիվ
հարցեր ու պրոբլեմներ: Ամենուրեք պրոբլեմներէից մեկը մար-
դու բնական ինքնորոշման հարցն է, սխրո, սեռերի փոխհարա-
բերութեան և ընտանիքի հարցը:

Պետք է նկատի ունենալ, վոր այդ պրոբլեմները հանդի-
սանում են վերածնութեան դարաշրջանի հոգեմտական գրա-
կանութեան ամենահոգեղ պրոբլեմները, բոլոր հոգեմտականներն
այս կամ այն ձևով շոշափել են այդ հարցերը: Բայց ամեն մի
գրող յուրահատուկ ձևով է քննութեան անել այդ հարցերը, չնա-
յած նրանց բոլորի յեկականների և տեսականների մեջ շատ
նմանութիւններ կան:

Այս տեսականից Սերվանտեսի լավագույն նովելաներից
մեկն անպայման «Ենչուեհի» է:

Պառավ գնչուեհին իր մոտ դաստիարակում է մի աղջկա,
վորին տալիս է Պրեսոսա անունը: Նա Պրեսոսային խոլորեցնում
է «բախտ բանալու» արվեստը, պարել և այլն: Մեծածախով, Պրե-
սոսան դառնում է նշանավոր պարուհի, աչքի յե ընկնում իր
չնաշխարհիկ գեղեցկութեամբ, խելքով և այնպիսի գրական հատ-
կութիւններով, վորի նմանը «չի կարելի գտնել վոչ միայն գըն-
չուեհիներէ, այլև բարձր դասերի ներկայացուցիչների մոտ»:

Ազնվական յերիտասարդներից մեկը սիրահարվում է Պրե-
սոսայի վրա և ամուսնութեան առաջարկութիւն է անում: Բայց
պառավ գնչուեհին պայման է առաջադրում—թողնել աղնական

կյանքը, դառնալ գնչու, միանալ գնչուներին թափառախմբին և յերկու տարվա ընթացքում, յեթե նա արդարացրեց իրեն վորպես գնչու, դրանից հետո միայն կտրուկ և այդ ամուսնությունը գլուխ գալ: Դոն-Պուանը (այսպես և յերկու տարեց ազնվականի անունը) թողնելով ամեն ինչ, դառնում և գնչու, փոխելով նույնիսկ իր անունը—Անդրես: Հետո մանրամասն պատմվում և, թե ինչպես Անդրեսը դառնում և վարպետ գնչու, կատարելագործվում և գողության մեջ: Սպանիայի քաղաքներից մեկում մի գողության կտորակցությամբ Պրեստան և Անդրեսը ձերբակալվում և բանտ են նետվում: Հետո բանտից պարզվում և, վոր Պրեստան հենց այդ քաղաքի կորրեկտորի (քաղաքագլխի) աղջիկն և: Պատմվ գնչուների փոքր հասակից նրան գողացել և և դաստիարակել իր մոտ, բոլորին հավատացնելով, թե նա իր թոռն և:

Պրեստանյին անմիջապես ազատում են բանտարկությունից: Ծնողները խիստ զայրանում են պատմվ գնչուհու վրա, վոր նա իմանալով իրենց աղջկա բարձր ծագման մասին, ցանկացել և նրան ամուսնացնել գնչու Անդրեսի հետ, այն ել մի այնպիսի մարդու հետ, վոր գող և և մարդասպան:

Ծնողները Պրեստանյի համար վորոշում են նոր ամուսին վորոնել, բայց նրանք ապշում են, յերբ նրանց աղջիկը համառ կերպով պնդում և, թե ինքը բացի Անդրեսից ուրիշ վոչ մեկի հետ չի ամուսնանա, վորովհետև ինքը սիրում և նրան և այդ սերը խորն և ու փոխադարձ: Ծնողները վճռականապես մերժում են աղջկա ցանկությունը, բայց յերբ իմանում են, վոր Անդրեսը «բարձր» ծագում ունի, վերջ ի վերջո, համաձայնվում են այդ ամուսնությանը:

Մենք այս նովելայում գործ ունենք յերկու պլանի, յերկու փաբուլայի հետ: Առաջին պլանը—ազնվական Դոն-Պուանի գնչու դառնալու պատմությունն և: Դրա պատճառը նրա անսահման սերն և գեղի Պրեստան, վորի բարձր ծագման մասին Դոն-Պուանը վոչինչ չգիտեր: Նա մինչև վերջին ըսպեն կարծում և, թե Պրեստան գնչուի յե, այսինքն ստոր ծագման տեղ մի աղջիկ: Բայց դասային տարրերությունները Դոն-Պուանի համար վոչ մի նշանակութուն չունեն: Անկախ այդ բոլորից, նա վորոշում և ամուսնանալ և կատարում և բոլոր պայմանները:

Թվում եր, թե ավելի լավ կլիներ, յեթե վերջում չպարզվեր, վոր Պրեստան հույնական բարձր ծագում ունեցող աղջիկ և, վոր Դոն-Պուանը լավ կլիներ ամուսնանալ գնչուի Պրեստանյի հետ: Այդ տիպի վերջավորությունը կարծես թե կլիներ հարցի հումանիտատի լուծում: Սերվանտեսն այն տեսակետն հայտնադ կլիներ, թե ամուսնության մեջ դասային տարրերությունները, նյութական հաշիվները պետք և վոչ մի դեր չխաղան: Բայց Սերվանտեսն այդպես չէ լուծում: Նրա մոտ Դոն-Պուանը և Պրեստան ամուսնանում են դասային վիճակների հավասարության սկզբունքի հիման վրա: Յեվ այդտեղ յե ունենում այնքան անըսպասելի և անտիկալ, վոր ընթերցողը չէր կարող մինչև վերջին եջերը յենթադրել, թե գործն այդ ընթացքն և ընդունելու: Այդ պատճառով ևլ նովելայի վերջավորությունը թվում և չպատճառաբանված, անիմատ և վոչ ցանկալի:

Բայց խնդիրն այն և, վոր յեթե Սերվանտեսը լուծել նովելան այնպես, ինչպես մենք ենք ցանկանում, նա ուսալիս չէր վնի: Այդ կլիներ ցանկալի, իդեալական, բայց վոչ ռեալ լուծում: Յեվ Սերվանտեսի հումորի ամբողջ խորիմաստությունը հանդես և գալիս հենց այն լուծման մեջ, վոր նա ընտրել և: Սերվանտեսը նույնպես այն կարծիքին և, վոր լավ կլիներ յեթե դասային տարրերությունը, գերբ և նյութական հաշիվները վոչ մի դեր չխաղային ամուսնության մեջ: Լավ կլիներ, յեթե Պրեստան մինչև վերջը մնար գնչու և Դոն-Պուանը նրա հետ ամուսնանալու միայն ներքին մղման և հակումների հետևանքով, նկատի չունենալով վոչ նրա ծագումը և վոչ ևլ ոժիտի չափը: Բայց Սերվանտեսը նկատում և, վոր այն իրականության մեջ, վորտեղ դործում են այդ հերոսները—ամուսնությունն այդ սկզբունքների վրա չեն վոր տեղի յե ունենում: Իրականության մեջ հաշվի յեն առնում և դասային վիճակը, և ոժիտը, և բոլոր այլ տեսակի նյութական հաշիվները:

Այսպիսով, իդեալական, ցանկալի պլանն իրական կյանքում բաշխվում և իրական կյանքի հետ—ամուսնությունը դառնում և հնարավոր միայն այն բանից հետո, յերբ պարզվում և նրանց հավասար սոցիալական վիճակը և նրանց հավասար ու բարձր սոցիալական ծագումը, հաղթությունը մնում և այս իրական պլանի կողմը:

Սերվանտեսն իր նովելլայում, այսպիսով, ցուցադրում է հումանիստական պլանի և իրականություն անհամապատասխանություն և անհամատեղելիություն մասում: Իրականությունը դեկլարվում և գործում և այլ սկզբունքներով և այնպիսի սկզբունքներով, վերոնք արամադոթրին հակառակ են հումանիստական պլանին: Նա մնում և վաստոքեն վերջինս սրան, վերջինս լավագույն ցանկություն, վերն անհնար և իրադրոժեկ այդ միջավայրում: Յեղ յեթե Սերվանտեսի նովելլայի վերջավորությունը թվում և անսոսակի, չպատճառարանված և վոչ արամաքանական, ապա այստեղ արտահայտվում է նրա քննադատական վերաբերմունքը իրական պլանին և ևատմամբ: Չպատճառարանվածը, անիմաստն ու վոչ արամաքանականը հենց այդ իրականությունն և, վերանի ամուսնություն բնագավառում դեկլարվում են այնպիսի սկզբունքներով, վերոնք չեն բղխում մարդու բնական էությունից:

Պրեստոսայի, այժմ Կոստանս դի Մանեսեանի հայրն իմանալով Դոն-Յուսանի բարձր ծագման մասին, հարց ե տալիս.—Ձեռնայնուամենայնիվ կցանկանայի իմանալ Անդրեանից, ինչ կլիներ, ցեթի ճակատագիրը հաջողեցներ նրա աժուանությունն առանց անախորժությունների և ցնցումների. նա իրեն յերջանի՞կ կզգար, անկախ այն բանից, թե ով և նա—Անդրեան, թե Դոն-Յուսան Կարկամոս։ Այս հարցին Դոն-Յուսանը պատասխանում է, թե անկախ այն բանից, նա իրեն կզգար ամենայն ջանքի մարդն աշխարհում, Այլ կերպ էլ չէր կարող լինել, վրդովհետև նա գրեթե յեր գարձել ժխայն իր անսահման սիրո թելադրանքով և նա կամուսնանար վրդպես Անդրեան, թե Դոն-Յուսան, իսկ ազջիկը վրդպես Պրեստոս, թե Կոնստանս—նրա կարծիքով, վոչ մի բան չէր փոխի վիճակի մեջ։

Սերվանտեան իդեալական պլանի իրողնակից և։ Նա այն
բանի կողմնակից և, վոր սիրո և ամուսնութեան մեջ հասարակ
կախանդառային դիրքը, նյութական հաշիվները վոչ մի դեր
չպետք է խաղան։ Նա հանդես և դալիս վարդես հումանիտա-
րայց միաժամանակ գիտակցում և, թե ինչպիսի վիճ գոյություն
ունի այդ հումանիտական իդեալների և այն իրականութեան
միջև, փոքտեղ զործում են նրա հերոսները։ Նովելայի յերկպաշ-
տությունը—իդեալական և իրական—նրանց հակասություններն

ու իրական պլանի հաղթանակը ցուցադրում է հումանիստական
իդեալների և գոյություն ունեցող իրականության աղադակող
հակասությունները:

Կույն անկեղծ սերը գոյութիւն ունի նաև Սանչոյի մեջ՝
Դոն-Կիխոտի նկատմամբ: Ահա թէ ինչպէս և Սանչոն բնորոշում
էրենց փոխհարաբերութեան բնույթը. — «Իմ վիշաղ և գժբախ-
աութիւնը հենց այն է, վոր յես պետք է հետևեմ նրան և չեմ
կարող չհետևել, մենք հայրենակիցներ ենք, միասին հաց ենք
կերել, յես նրան շատ եմ սիրում և բացի այդ, յես իմ բնու-
թեամբ ճշմարիտ մարդ եմ: Այդպիսով, մեզ մի բան չի կա-
րող բաժանել իրարից մինչև մեր պերեզմանը, յերբ մեզ համար
խոնավ հողում անկողին կպտտրասանն»:

Մի այլ տեղ Սանչոն ասում է.

«Նա աղաքնու սիրտ ունի, նա վոչ վոքի չի կարող վատու-
թիւն անել: Նա բոլորին յավութիւն և անում և նա չունի նեն-
գամտութեան վոչ մի նշույլ: Յերեկամ կարող է նրան հալա-
տացնել, վոր ցերեկվա ժամը 12-ին խորը գիշեր է: Ահա այս
շարժամտութեան և անկեղծութեան համար ել յես սիրում եմ
նրան, ինչպէս աչքի լույսը, և չեմ կարող թողնել նրան, ինչ-
պիսի հիմարութիւն էլ նա կպտտրի»:

Իսկ Դոն-Կիխոտը Սանչոյին այսպէս և բնութագրում.

«Սանչո Պանսան յովագույն զինակիրներից մեկն է... Նրա
զրուցներում հանդիպում են այնպիսի սրանչելի միամտութեան,
վոր և յովականութիւն են գտնւմ, և մտածում են, թէ նա ով

է—հասարակ մարդ է, աշխարհի յերեսին ամենասրամիտ մար-
դը: Նա յերբեմն չար կատակներ է անում, վորոնք ստիպում են
մտածել, վոր նա նուրբ է և խորամանկ, նա ունենում է նաև
հիմարագուշն արարքներ, վորին ընդունակ է միայն գոռղաղան
անգրագետը: Կասկածում է նա ամեն ինչի մեջ և միաժամանակ
հավատում է ամեն ինչի: Յերբ յես մտածում եմ, թէ ահա նա
կիջնի անմտութիւնների հատակը, նա այնպիսի բռուկ է բաց
թողնում, վորոնք նրան բարձրացնում են յերեկոյից վեր: Մի
խաբով յես Սանչոյին չեյի վոխարինի ուրիշ զինակիրով, յի՞թէ
գրա գլխաց ինձ հուշնիսկ մի քաղաք տային»:

Դոն-Կիխոտն աշխատում է արհեստականորեն պահպանել
այն տարածութիւնը, վոր գոյութիւն ունի տիրոջ և ծառայի
միջև: Յեզ չնայած Սանչոն յերբեմն համբուրում է նրա ձեռքը
և հուշնիսկ հաղուտի ծայրը—այնուամենայնիւ նրանց միջև
գոյութիւն ունի լիակատար աղաատութիւն: Դոն-Կիխոտը յեր-
բեմն ջղայնանում և Սանչոյի վրա, նրան հայնայում է, ինչպէս
տեղը, ծառային, բաց հետո անմիջապէս նա իր ծառայից ներո-
ղութիւն և խնդրում.

«Ներիր, Սանչո: Դու հասկացող մարդ ես և չես կարող չի-
մանալ, թէ վորքան դժվար է զսպել զայրույթի առաջին պոռթ-
կումը»:

Թէ վոր չափով և Սանչոն իրեն աղատ պահում իր տիրոջ
նկատմամբ, այդ յերեւում է այն տեսարանից, վորտեղ Սանչոն
ամբողջ ուժով պաշտպանվում է Դոն-Կիխոտի հարձակումներից:
Տխուր պտակերի տապալին հալատացրել են, վոր նրա Դուլցինի-
յան այն ժամանակ կաղապի կախարդանքից, յերբ նա Սանչո-
յին յերեք հաղար յերեք հարյուր հարված տա փայտով: Բանի
վոր Սանչոն չեք ցանկանում այդ հարվածները հոժարակամ
ստանալ, Դոն-Կիխոտը մի անգամ, գիշերը, յերբ Սանչոն հան-
գիստ քնած էր, անսպասելիորեն հարձակվում է նրա վրա և
պատրաստվում է զոնե յերկու հազար հարված հասցնել: Սան-
չոն այդ ժամանակ արթնանում է. — «Նա վեր կացավ, ցատկեց
իր տիրոջ վրա, գրկեց նրան ձեռքերով և այնպէս խփեց վոռ-
քով, վոր Դոն-Կիխոտն ամբողջ հասակով փովեց գետնի վրա:
Յեզ հետո ծունկը դնելով նրա կրծքին, թույլ չեք տալիս վոչ
ջարժվի և վոչ ել հոգոց հանի: Դոն-Կիխոտը բղավում է նրա

վրա—«Ինչպէս, դաւաճան, դու համարձակուում ես բռնաբարձ-
րացնել քո որինական տիրոջ դեմ, վորը քեզ կերակրում է»։
«Յես բռնառ բարձրացնելու մտադրութեան չունեմ, միայն
պաշտպանում եմ իմ մարմինը, վորի խնայական տերը յես եմ։
Թող ձերդ գերազանցութեանը խոսք տա, վոր ինձ ձեռք չի տա,
և նա թող հրաժարվի իր մտադրութեանից, միայն այն գեղ-
քում յես ձեզ ազատ կթողնեմ և թույլ կտամ վեր կենար»։

Այս բոլոր փոստերը ցույց են տալիս, վոր Սանչոն և Դոն-
Կիխոտը վոչ միայն հակադրութեաններ են։ Նրանց միջև գոյու-
թյուն ունի վերին աստիճանի անկեղծ կապ։ Սանչոն Դոն-Կի-
խոտի մեջ ծագելով նրա ասպետական իշուղիաները, միաժամա-
նակ բարձր և զնահատում նրա այն գրական կողմերն ու նպա-
տակները, վորոնց մասին խոսվեց վերեւում։ Դոն-Կիխոտի պայ-
քարն արդարութեան և ճշմարտութեան համար, թշուառներին
ոգնելու և պաշտպանելու համար—անա օչն շղթան, վոր կա-
պում է նրան Դոն-Կիխոտի հետ։

Սրանով պետք է բացատրել այն հուզիչ տեսարանը, վորով
վերջանում է «Դոն-Կիխոտը»։ Վերջին ժամերն ապրող Դոն-Կի-
խոտը յեկել է այն յեղրակացութեան, վոր իր ասպետական թա-
փառումները հիմար մի բան են յեղել։ Նա հայտարարում է, վոր
ինքն այլևս Դոն-Կիխոտ չէ, այլ Ալոնսո Կիխանո, վոր նա այժմ
Ամադրիս Գալիացու և նրա բյուրավոր ժառանգների թշնամին է,
և վոր այժմ նրա համար ատելի յեն թափառող ասպետների բո-
լոր անբարեխա պատմութեանները։ «Յես հասկացա այն անմը-
տութեանը և այն վտանգը, վորին յենթարկեցի ինքս ինձ՝
կարդալով այդ պատմութեանները»։

Սանչո Պանսան խորապէս ցնցված է։ Նա արցունքներն
աչքերին դիմում և մեռնող Դոն-Կիխոտին.— «Ախ, չմեռնեք
ձերդ գերազանցութեան, տեր իմ, լսեցեք իմ խորհուրդը—ապ-
րեցեք ևս բազում տարիներ։ Վորովհետեւ մեծագուշն խելագա-
րութեանը, վոր կարող է անել մարդս, մեռնելն է, այն ել
առանց վորեւ պատճառի, յերբ վոր նրան սպանող չկա և վա-
ջինչ չի մաշում նրան, բացի թախիծից»։

Դոն-Կիխոտն իր հերթին Սանչոյին կտակելով իր փողբոր,
ասում է՝ «Յեթի խելագարութեանս ժամանակ յես ոգնեցի նրան
կղզու կառավարութեանն ստանալու համար, ասպ հիմա, առողջ

մտքը, յես յեթի ի վիճակի լինելի, վորջ թագավորութեան կտա-
յի, վորովհետեւ նրա պարզ ու հաշտարիմ սիրտն արժանի յե
դրան»։

Դոն-Կիխոտի վոչ միայն ասպետական իշուղիաները, այլև
բոլոր լավագուշն և բարձր նպատակները զիջելով բուրժուա-
կան իրականութեանը ջախջախելիցին ճիշտ այնպէս, ինչպէս
այդ իրականութեան հետ կապված Սանչոյի բոլոր հույսերը չի-
բաղորդվեցին։ Մեկը ցանկանում եր պաշտպանել արդարութեանն
ու ճշմարտութեանը մի հասարակութեան մեջ, վորը կառուցված
է կեղծիքի և խաբէութեան վրա, պաշտպանել մարդկային ար-
ժանապատմութեանն այն ժամանակ, յերբ այդ բոլորը վա-
ճառքի յեն հանվում, իսկ մյուսն աշխատում եր դուրս գալ աղ-
քատութեան ճիրաններից այն ժամանակ, յերբ հասարակութեան
մի մասի յերջանկութեանը կառուցվում է մյուս մասի աղքա-
տութեան և դժբախտութեան վրա։

Վոչ Դոն-Կիխոտի իղիալիզմը և վոչ ել Սանչոյի սեւալիզմը
չփրկեցին նրանց. յերկու դեպքում ել անհաջողութեանն ան-
խուսափելի յեր։

Վերջ է յեկքը, և ինչ և հակադրում այս բոլորին Սերվան-
տեսը։ Համենայն դեպս մի բան պարզ և նրա համար—ծիծա-
ղելի յե ֆիոդալիզմը, և Սերվանտեսն առանց խղճի խայթ գգա-
լու թաղում է տխուր պատկերի ասպետի բոլոր ասպետական
զառանցանքները, (ինքը, Դոն-Կիխոտն և այն զառանցանք հա-
մարում)։ Բայց մյուս կողմից Սերվանտեսը ձեռք չի մեկնում
կապիտալիզմին, հենց այդ իրականութեան մեջ է, վոր հալած-
ված է և ճշմարտութեանը, և իրավունքն ու արդարութեանը։

«Յերջանիկ է յեղել այն ժամանակը,—ասում է Դոն-Կի-
խոտը,—և բախտավոր այն դարը, վոր հնում կոչելիս են յեղել
վոսկէ դար, այն ել վոչ թէ նրա համար, վոր վոսկուց է (այն-
քան զնահատելի մեր յերկաթե դարում)»... այլ նրա համար, վոր
այն ժամանակ ապրող մարդիկ չգիտեցին յերկու բառ՝ իմը և քո-
նը։ Այդ սրբազան դարում ամեն ինչ ընդհանուր եր... Այն ժա-
մանակ ամենուրեք խաղաղութեան, բարեկամութեան, համա-
ձայնութեան եր տիրում։ Ստութեանը, նենգութեանն ու խո-
ւամանկութեանը չկին խառնվում ճշմարտութեան և անկեղ-
ծութեան։ Արդարութեանն իշխում եր լիակատար կերպով և վոչ

շահամուլությունը, մեջ կողմնապահությունը, վոր հիմա այնքան
ստորացնում, ճնշում ու հալածում են Զրան (մարդուն), չեղին
հանգսնում վաղ վերամուրել և վաղ ել շվտիկ նրան»:

Բայց վերն և յեղբ այս բոլորից: Սերվանտեսը կանգնած
է յերկու աշխարհների տրանքում և յերկուսն էլ հավատարմ չա-
փով ընդունելի չեն նրա համար: Նրա ստախրան ուղղված և և՛
Ֆեոդալիզմի, և՛ կապիտալիզմի դեմ: «Սերվանտեսի մոտ շատ ուժեղ
են այլ նորմաներ և ավելի հարուստ ու ավելի մարդասիրական
կյանքի պահանջը, քան բուրժուական շահերի այդ թաղափարու-
թյունն է: Սերվանտեսի հումորը վերաբերում է բուրժուական
իրականությանը և այն ֆանտաստիկն ու ուրվականներին, վո-
րոնք չնայած ընդունակ են վարկաբեկելու և խայտառակելու
այդ աշխարհը, բայց իրենք հազիվ են կանգնում իրենց վոտ-
քերի վրա»^{*)}: Այդ ավելի հարուստ, գեղեցիկ և հումանիտարական
կյանքի պահանջն ամբողջովին բղխում էր ժողովրդի շահերից
և Սերվանտեսի ժողովրդայնության գաղտնիքը պետք է վորոնել
հենց այստեղ: Թագելով ֆեոդալիզմը և վարկաբեկելով ու խայ-
տառակելով կադիտալիստական հասարակության այլանդակու-
թյունները, Սերվանտեսը հենց դրանով վեր է բարձրանում իր
դասի մանր ազնվականության (հիդալգո) նախապաշարունակներից
և իր ստեղծագործության սրբեկտիվ բովանդակությամբ կանգ-
նում և ժողովրդական գիրքերի վրա: «Սերվանտեսը չէր պատ-
կանում վոչ բուրժուազիային, վոչ իշխող դասակարգերին: Նա
ամենից առաջ պատկանում է սպանական ժողովրդին»^{**)}:

Յեւ միանգամայն իրավացի չէ նշանավոր խորհրդային
սերվանտեսագետ Կրժևսկին, յերբ գրում է.

«Սերվանտեսի մեծությունն արտահայտվում է առաջին
հերթին նրա պատմական հոստոություն մեջ, յերբ նա կարողա-
ցավ հիդալգոների կործանման և կապիտալի նախնական կուտակ-
ման վոլորապատկառի մեջ տարբերել հիմնական շարժող ուժերի
համեմատությամբ այն թույլ կողմը, ժամանակակիցների կող-

մից չընդունված այն դեմոկրատական արվեստ, վորին պատկանում
էր ազագույն: Միայն այստեղ, այս ուղղության մեջ պետք է վո-
րոնել բացառությունը, թե ինչու Սերվանտեսը գրականութեան
պատմության մեջ հանդես է գալիս վորպես մոլորվողական գրող,
վորոնց վորոնում և հայտնագործում են դարաշրջանները, պատ-
մական յեղբ տեսնելով այն դեմոկրատիայի մեջ»^{*)}:

Սերվանտեսը բազմաթիվ թեկերով կապված է իր ժողովրդի
դի հետ, նրա համակրանքն այդ ժողովրդի կողմն է:

Բավական է համեմատել այն նկարագրությունը, վոր տեր-
վում է վեպում հասարակական տարբեր խավերի կապակցու-
թյամբ:

Դուքսերի և դքսուհիների դատարկ կյանքի նկարագրու-
թյանը հակադրվում է ժողովրդի ծոցից դուրս յեկած մարդկանց
վառ և զուենդ նկարագրությունը:

Սերվանտեսն այս մարդկանց մոտ գտնում է այնպիսի հե-
տաքերի կողմը և հատկություններ, վորոնց նկարագրության
վրա մեծ սիրով կանգ է առնում վոչ միայն հեղինակը, այլև
ընթերցողը: Կոպիտ, վոչ գրավիչ աղախին Մարիտաբենսը, իր
վերջին կողակներով Սանչոյի համար գնում է մի դավաթ գինի:
Չարամիտ և բարոյական խիղճալի թանտոնի բարեհոգի տեր:
Գալիս վորպես տիկնիկային թանտոնի բարեհոգի տեր:

Ժողովրդական ներկայացուցիչները այս նկարագրության
մեջ ծ, վոր հանդես է գալիս Սերվանտեսի հումանիզմը: Նրա
ռեալիզմը, կյանքը նկարագրելու նրա մեծ վարպետությունը
միանում է խորին հորգանքի և սիրո հետ: Գեպի մարդը, մարդ-
կային լավագույն արժանիքները:

Այդ հումանիզմը Սերվանտեսին թույլ է տվել Դոն-Կիխո-
տի խելագարության առկա բարձր նախապայման տեսնել: Այդ
հումանիզմը թույլ է տվել գյուղացի-զինակրի մեջ տեսնելու
ազնվություն, անկեղծություն, կյանքը ճանաչելու խորը ընդա-
նակություն և ժողովրդական առողջ իմաստություն: Նա Սան-
չոյին դարձնում է իմաստուն և հուսալից գալառապետ, նրան հա-
կադրելով դատարկ և ապուշ դուքսին: Սերվանտեսի սիրտ կապն

^{*)} Н. Берковский, «Эволюция и формы раннего реализма на запа-
де», «Ранний буржуазный реализм» *ժողովածու*, 1936 թ. Լենինգրադ, հջ 26:

^{**)} Б. М. Энгельгард, «Сервантес и его роман», «Դոն-Կիխոտի»
1938 թ. հրատ. վերջաբանը:

^{*)} Б. Кржевский, «Сервантес», «Ранний буржуазный реализм» *ժողովածու*, հջ 176:

իր ժողովրդի հետ, ցայտուն կերպով յերևում և Սանչոյի տիպի միջոցով:

Սրանով ել պայմանավորվում և Սերվանտեսի հումորի և սատիրայի բոլոր առանձնահատկությունները: Սերվանտեսի սատիրան վերջին ել ջախջախիչ լինելի, ծիծաղյալ ուղղությամբ, այնուհետև մենայնիվ հուստահալության վրա մի նշույլ չկա նրա մոտ: Նրա վեպը, չնայած խորը վոլրերգականության, կենսաբան է: Այստեղ արտահայտվում և Սերվանտեսի անսահման հավատը դեպի մարդու անսպառ ուժերն ու ստեղծարարական կարողությունները:

5. ԹԱՏՐՈՆԸ ՅԵՎ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՆ

Վերածնունդի դարաշրջանի գրականության պատմության օւսումնասիրության ժամանակ աչքի չի ընկնում մի հետաքրքիր մոմենտ, թատրոնը և դրամատուրգիան վրա մի յերկրում աշխարհի բարձր զարգացման չհասնի, ինչպես Անգլիայում և Սպանիայում: Յեվ յեթե սպանացիները խոշոր դեր խաղացին ռեալիստական վեպի և նովելայի ձևավորման և զարգացման պատմության մեջ, ապա վրա աչքի առնելով դեր խաղացին նաև թատրոնի և դրամատուրգիայի պատմության մեջ:

Ինչպես հին Հունաստանում և Արևմտյան Յեվրոպայի մյուս յերկրներում, այնպես ել Սպանիայում թատրոնի և դրամատուրգիայի առաջացումը սերտորեն կապված և ժողովրդական ծիսակատարությունների հետ:

Մինչև Վերածնունդի դարաշրջանը սպանական դրամայի մեջ սովորաբար նշում են յերկու հիմնական ուղղություն, ա) կրոնական-յեկեղեցական, բ) աշխարհիկ:

Առաջին կարգի դրամաների մասին մենք ավելի կոնկրետ գաղափար ենք կազմում 13-րդ դարից սկսած: Այդ տեսակետից շատ հետաքրքիր և Ալֆոնս X-ի որենքները թատրոնի և դրամայի մասին: Կա հոգևորականության արգելում և մասնակցել կոմիքական բնույթ ունեցող դրամաների բեմադրությանը: Արգելում և նույնիսկ այլ տիպի դրամաների բեմադրությանը ներկա լինել:

Մյուս կողմից նա հանձնարարում և հոգևորականության

ամեն կերպ ուսանելի կրոնական բնույթի դրամաների բեմադրության գործին: Այդ որենքներից յերևում և, վոր կրոնական բնույթի դրամաները նույնիսկ խրախուսվում էին պետության կողմից:

Այս տիպի կրոնական դրամաներն Սպանիայում կոչվում էին Autos: Թեման առնվում էր կրոնի պատմությունից, մեծ մասամբ միստիկական գործեր էին և հետադիմում էին մի նպատակ—հանդիսատեսների սեփականությունը դարձնել այս կամ այն կրոնական դոգման: Autos-ները բաժանվում էին յերկու յիկլի—ծննդյան (Ջորդանի) յիկլ և դատական յիկլ:

Կրոնական դրամաներից բացի գոյություն ունեին նաև աշխարհիկ դրամաներ: Այս դրամաների թեման սկզբում առնվում էր դերազանցապես ազնվականության կյանքից: Սպանական ազնվականությունը սովորաբար կրում էր թիկնոց և սուր, այդ պատճառով այդ տիպի դրամաները կոչվում էին «սրի» և թիկնոցի կոմեդիա: Սրանք մեծ մասամբ կենցաղային կոմեդիաներ էին և գերազանցապես շոշափում էին սիրո պրոբլեմները: Կենք սովորաբար հանդես էր գալիս վորպես ազատ սիրո կողմնակից, այն տեսակետն էր հայտնում, վոր իրավունք ունի ամուսնանալու նրա հետ, ում սիրում և, իսկ տղամարդը դեմ էր դուրս գալիս այդ սկզբունքին, պաշտպանում էր իր պատիվը սրով և հաճախ սպանում էր նրան, ում սիրում էր, կասկածելով, թե նա արատավորել էր իր պատիվը:

Կային նաև այլ տիպի դրամաներ, վորոնց բեմադրությունը պահանջում էր բեմական ավելի լայն հնարավորություններ: Այդ տիպի դրամաները հայտնի էին քաղմատիկ անուններով, բայց նրանք յերբեմն կոչվում էին մե ընդհանուր անունով—Comedies Teatro: Այնուհետև Սպանիայում տարածված էր նաև մի ժանր, վոր հայտնի էր ինտերմեդիա անունով: Ինտերմեդիաները փոքրիկ կատակներ էին, վորոնք բեմադրվում էին ընդմիջումների ժամանակ: Այդ բեմադրությունների նպատակն էր նախ մեղմացնել այն լարված վիճակը, վոր ստեղծվում էր հանդիսատեսի համար լուրջ գործեր դիտելու ժամանակ և հետո բեմադրությունները բազմապես դարձնել:

Թատրոնը և դրաման Սպանիայում լայն զարգացում են ստանում միայն Վերածնունդի դարաշրջանում: Թե դրանից առաջ և թե այդ ժամանակ Սպանիայի գյուղերում և քաղաք-

ներում թափառում էյին բազմաթիվ գերաստանական խմբեր: Այդ խմբերից շատերը թեպետ շատ վտար էյին, բայց չէյին հրաժարվում բարդ գործեր բեմադրելուց: Կային նաև ավելի մեծ և հարուստ գերաստանական խմբեր: Իրանք արդեն ունեյին իրենց բոլոր հարմարությունները: Թատրոնին պատկանող բոլոր իրերը նրանք գյուղից գյուղ և քաղաքից քաղաք էյին տեղափոխում բազմաթիվ սայլերով, խաղում էյին բաց յերկնքի տակ:

Դերասանական լավագույն խմբերն աշխատում են ճիմած վորվիլ կենտրոնական քաղաքներում: Նրանք մտածում են կառուցել թատրոնի մշտական շենք, վոր մինչ այդ գոյություն չունեին:

Թատերական կյանքի կենտրոնը դառնում և Մադրիդը, վորը 1560 թվին դարձավ Սպանիայի մայրաքաղաքը: Առաջին խոշոր թատրոնը կառուցվում և 1574 թվին: Այդ նույն շրջանում մշտական թատրոններ են կառուցվում նաև Սեվիլիայում:

Քաղաքում խաղացող ամեն մի խումբ պետք և թագավորից հասուկ թույլտվություն ստանալ: Պետությունը թատրոններին նկատմամբ բարձրացված վերաբերմունք չունեին: Այդ գործում հատկապես ակաբի գեր եր խաղում հոգևորականությունը: 1597 թվին Ֆիլիպ III-ը՝ հոգևորականության թելադրանքով և պահանջով, մի դեկրետ հրամարակեց թատրոնները փակելու մասին: Հետաքրքիր և պատճառաբանությունը, բանից պարզվում և, վոր թատրոնը դարդացնում և ծուլություն փողովրդի մեջ և նրանց միտքը հեռու յե պահում ուղղական ձևանարկություններից: Իմաստուն մարդկանց դատողության համաձայն, յեթև սուլթանը և անգլիական թագավորը ցանկանան սղանական ազգը կործանելու միջոց գտնել, ապա չկա ավելի լավ միջոց, քան թատրոնն և *):

Սակայն այդ տիպի արգելությունները յերկարատև չէյին լինում: Չնայած այս բոլոր հալածանքներին, այնուամենայնիվ Վերածնունդի դարաշրջանի սպանական թատրոնն ու գրաման ուժեղ պայքար են ծավալում միջնադարյան ֆեոդալական աշխարհայացքի դեմ:

*) С. Мокульский, «Хрестоматия по истории западно-европейского театра», I, стр. 299.

Սպանական Վերածնունդյան դարաշրջանի թատրոնի և դրամատուրգիայի առաջացումն ու ձևավորումը սերտորեն կապված և նախ Սերվանտեսի անվան հետ: Սերվանտեսն իր «Դոն-Կիխոտը» 1-ին մասի 48-րդ գլխում հանդես և զայն վարպես ուսուցիտական դրամայի կողմնակից: «Կոմեդիան»,— գրում և Սերվանտեսը,— պետք և լինի մարդկային կյանքի հայելին, բարքերի որինակի, ճշմարտության նմուշ, իսկ այն կոմեդիաները, վոր այժմ բեմադրվում են, անմոտեթյունների հայելի յեն, հիմարությունների որինակ և ընչաքաղցության նմուշներ»: Սերվանտեսը հատկապես ջախջախիչ քննադատություն և յենթարկում միջնադարյան հոգևոր դրամաները: «Իսկ յեթև վերցնենք հոգևոր դրամաները, նրանց մեջ վորքան չեզոք հրաշքներ և կեղծ ըմբռնված իրադրություններ կան... և այս բոլորն արվում և ի միայն հիմարություն, հեպուսակ պատմություն...»:

Սերվանտեսն այդ կեղծ դրամաներին հակադրում և իր ուսուցիտական ինտերմեդիաները: Այդ գործերում նա վուժմիայն ջախջախիչ քննադատություն և յենթարկում հին ֆեոդալական աշխարհայացքն ու կրոնական միստիցիզմը, այլև հանդես և զայն վորպես հումանիստ: Նա պաշտպանում և կնոջ ազատությունը, քննադատելով ընտանեկան դեսպոտիզմը («Մանդու ծերունին»): Նա դատափետում և հոգևորականության այլասերված կյանքը, չաղաատնությունը («Սուլամանկյան քարայրը»): Սերվանտեսը միաժամանակ գրում և պատմական վոդերբուլություններ («Եռամասի գրավումը»), վորտեղ փառաբանում և սպանական ժողովրդի հերոսական անցյալն ու պայքարն ոտար կեղերիչների դեմ: Նա ցույց և տալիս, թե ինչպես Նումանսի բնակիչները 14 տարի շրջապատված լինելով հռոմեական զորքերով, յեն հանձնվում հակառակորդին: 14 տարի զիմադրելուց հետո, նրանք կործանում են քաղաքը և ինքնասպանություն գործում: Հռոմեական բանակը վուժ մի կենդանի մարդ չի գտնում քաղաքում: Ի դեպ, յերը Նապոլեոնի բանակը ներխուժեց Սպանիա, պաշարված Սարագոսայում բեմադրվում եր Սերվանտեսի այդ վոդերբուլությունը և վոդեշնչում սպանացիներին:

Լուսին դե Վեգան սպանական թատրոնի և դրամատուրգիայի պատմության մեջ ամենախոշոր դեմքն է: Իզուր չե, վոր նրան համարում են «սպանական Շեքսպիր»:

Ծնվել է Մադրիդում, ազնվականի ընտանիքում: Նրա արտակարգ ընդունակությունները դրսևորվում են շատ վաղ հասակից: Կենսագիրները հավատացնում են, վոր նա հինգ տարեկան հասակում կարդում եր վոչ միայն սպաներեն, այլև լատիներեն և վոր նա բանաստեղծություններ եր հորինում, յերբ դեռ գրել և կարդալ չգիտեր: Տասը տարեկան հասակում ընդունվում է Կոլեջ (Մադրիդում), իսկ իր առաջին կոմեդիան գրում է 11 տարեկան հասակում: Առաջին կոմեդիան, վոր հասել է մեզ, գրել է 13 տարեկան հասակում: Սիրային արկածների պատճառով բանտարկվում և աքսորվում է Մադրիդից 8 տարով: Բայց այդ չի խանգարում Լուսինին՝ գաղտնի վերադառնալ Մադրիդ և փոխոցընել իր սիրած աղջկան:

Նա դառնում է դինավոր, մասնակցում է Անգլիայի դեմ մղված կռիվներին: Նա «Հաղթական Արամայի» դինավորներից մեկն եր, և այն սակավաթիվ յերջանիկներից մեկը, վոր կենդանի վերադարձան հայրենիք: Նա ծառայություն է մատնում դուքս Ալբայի մոտ, վորը Նիդերլանդների ապստամբություն ճնշման ժամանակ աչքի ընկավ իր բարբարոս դաժանությունից:

Կյանքի վերջին շրջանում Լուսին ընդունում է հոգևոր կոչում և մասնակցում է ինկվիզիցիայի մի քանի դատավարություններին: Բայց հոգևոր կոչումը նրա վրա վոչ մի ազդեցություն չգործեց: Հոգևորականությունը նրան հաճախ մեղադրում եր այն բանի համար, վոր նա չի հրաժարվում իր աշխարհիկ սովորություններից: Նրան մի քանի անգամ ստիպում են մեղքերը քավելու:

Լուսին մահացավ իր փառքի գագաթին հասած: Նա քառասուն տարի անընդհատ իշխում եր սպանական բեմի վրա և իր կենդանության ժամանակ իրեն հավատարմրյակից չունեի: Նրա անունը հայտնի յեր Սպանիայից դուրս, Արևմտյան Յեփրոսոփի գրեթե բոլոր յերկրներում:

Առաջին հանգամանքը, վոր ապշեցնում է բոլոր դրականագետներին, դա Լուսինի չտեսնված թեղծավորությունն է: Հենց այդ հանգամանքն է նկատի ունեցել Սերվանտեսը, յերբ նրան անվանել է «Բնության հրաշք»: Նա գրել է հազար ութ հարյուր դրամա և մոտ չորս հարյուր Autos (հոգևոր դրամա): Նրա այդ 2200 դրամաներից ապագրվել և մեզ են հասել միայն 500 դրամա: Բացի այդ, Լուսին գրել է հազարավոր բանաստեղծություններ, գրել է բազմաթիվ եպիգրաման պոեմներ և վիպեր:

Այս բոլորի հետ միասին Լուսին դե Վեգան յեղել է դրամատուրգիայի խոշոր անսարան: 1609 թվին լույս տեսավ նրա «Մեր ժամանակ կոմեդիա գրելու մոր պոետիկա» աշխատությունը, վորտեղ Լուսին շարադրում է այն նոր անսական սկզբունքները, վորոնց վրա պետք է կառուցվեր սպանական դրամատուրգիան և թատրոնը:

Լուսին դե Վեգան և նրա դպրոցը դուրս են գալիս անսակ կոմեդիայի և վորոքերգության ստրկական ընդորինակության գեմ: Լուսին դե Վեգայի հակառակորդները գտնում էին, վոր սպանական դրամատուրգիան պետք է ստեղծվի այն սկզբունքների համաձայն, վորոնցով զեկուպարվել են հին հունացիները և հռոմեացիները: Լուսին շատ բարձր է գնահատում անսակ դրամատուրգներին, բայց նա միաժամանակ գտնում է, վոր սպանական դրամատուրգները վոչ թե պետք է ընդորինակեն նրանց, այլ ստեղծեն միանգամայն ինքնուրույն սպանական դրամա:

«Յերբ յես կոմեդիա յեմ գրում,—ասում է Լուսին,—մի կողմն եմ թողնում բոլոր որենքները և կարինետից հեռացնում եմ Պլալտոսին և Տերենտոսին»^{*)}:

Լուսին առաջադրում է յերեք հիմնական սկզբունք. ա) Ամեն մի ժողովուրդ պետք է ստեղծի իր սեփական թատրոնն ու դրաման: Ինչ վոր դուր եր գալիս հունացիներին և հռոմեացիներին, կարող է դուր չգալ մյուս ժողովուրդներին: Սպանացիները վոչ չընչով հետ չեն մնում մյուս ժողովուրդներից, այդ պատճառով և նրանք իրավունք ունեն ստեղծելու սեփական թատրոն ու դրամա: Սպանական թե անցյալ և թե ներկա կյանքը կարող է դրամայի առարկա լինել: բ) Կուլտուրան մշտապես առաջ է

^{*)} C. MOKYABCH, նույն անգր, էջ 299:

գնում կ'զարգանում, զրա հետ միասին զարգանում և կատարելադրվում է զբաման: «Ճշմարիտ կոմեդիան, ինչպես նաև դրական ամեն մի ստեղծագործություն, ունի իր նախասկզբ և այդ նպատակն է՝ նամանվել մարդկային քայլերին և նկարագրել զարաշրջանի բարքերը»^{*)}: Յեղ վորովհետև նոր զբամանի հիմնական նպատակն այդ է, այսինքն ուսուցիչ, այդ պատճառով էլ սպանական զբաման պետք է ավելի բարձր լինի անտիկ զբամանից, վորովհետև նոր զբամանուրդը պետք է արտացոլի այն ամենը, ինչ վոր տեսնում է իր շրջապատում: Նոր զբաման լեկենդանի նկարագրություն միջոցով տալիս է մեր կյանքի ճշմարիտ պատկերը, այն ամենը, ինչ վոր մենք իրական տեսնում ենք—սարսափի և ծիծաղի, տխրության և ուրախության, չարի և բարու խորհուրդը... Կոմեդիան վորպես հայելի մեր առաջ է և ամեն մեկը կարող է այնտեղ տեսնել իր դեմքը—հիմարը և խելոքը, ծերը և յերիտասարդը, թագավորը և ճորտը, մարդը և կինը, աղջիկը և աղբին: Վերջապես և ուրախությունը կյանքում գոյություն ունեն միասին, նոր զբաման պետք է առ նրանց նկարագրությունը և այդ զբաման չպետք է լինի վոչ վորքերգական և վոչ էլ միայն կոմիկական—յերկուսը միասին պետք է հանդես գան: Նոր զբամանուրդն անտիկ գրողներից տարբերվում է նաև նրանով, վոր նա մեծ ուշադրություն է դարձնում իր հերոսների հոգեկան կյանքի նկարագրությանը: Գ) Իսկական զբամանուրդը չպետք է յենթարկվի վոչ մի որևէ բանի, թեկուզ այդ որևէ բանն ստեղծած լինի Արիստոտելը: Գրողը ինքը պետք է ստեղծի որևէ բանը: Կոմեդիա ասելով Լուկեն հասկանում և զբամանիկական մի այնպիսի գործ, վորն ունի յերեք գործողություն, ամեն մի գործողությունը կատարվում է մեկ օրում, զբաղված է չափածո, չի պահպանվում տեղի և ժամանակի միությունը և հետո, վորքերգական և կոմիկական տարրերը հանդես են գալիս միասին:

Լուկե դե Վեգայի զբամաները կարելի չե բաժանել յերեք մեծ խմբի.

ա) Պատմական զբամաներ, վորոնք իրենց բնույթով շատ նման են Շեքսպիրի քրոնիկներին: Լուկեյի հանձարը գերազան

չապես արտահայտվել է այդ ժանրում, բ) Կրոնական զբամաներ և գ) Լեկցադային զբամաներ, վորոնք հայտնի չեն Սրի և Թիկենցի կոմեդիա անունով:

Լուկե դե Վեգան իր այդ բոլոր զբամաներում տվել է Սպանիայի թե իրեն ժամանակակից և թե անցյալ պատմական կյանքի նկարագրեր: Նրա զբամաներում հանդես են բերված Սպանիայի բոլոր խավերն ու դասակարգերը: Հիմնական ստանդըն այդ բոլոր գործերի մեջ սերն է, խաղաղ և պատիվը: Այդ տեսակետից Լուկեյի լավագույն գործերից մեկը «Պատիվը վրեժխնդրությամբ չե» կոմեդիան է:

Այս կոմեդիան իր թեմայով շատ նման է Եվրիպիդեսի «Իպոլիտին» և Բասինի «Ֆեդրային», միայն այն տարբերությունով, վոր Լուկեյի մոտ գործողությունը կատարվում է Իտալիայում, Թերրարում:

Ինչպես հայտնի չե, Եվրիպիդեսի և Բասինի հերոսները սիրելով իրենց խորթ վորդուն, այնուամենայնիվ նրանք չեն գնում այնքան հեռու, վոր մոտ կապեր հաստատեն իրենց վորդու հետ: Լուկեյի Կասանդրան առանց այլևայլություն հանձնարվում է Թերեզերիկին:

«Իմ հոգու ներսում կարծես թե մի ձայն ասում է՝ վորտեղ գոյություն ունի սեր, այնտեղ գոյություն չունի դավաճանություն: Յես կհանձնվեմ նրան, այդ գեղեցիկ վորդուն... Յես վերջինը չեմ, վոր սիրում եմ անորինսարար, և առաջինը չեմ, վոր դավաճանում եմ ամուսնուս»:

Բայց ամուսինը՝ Լուզովիկը՝ կոչվում էր դավաճանությունը համարում է ամենամեծագույն վիրավորանքն իր պատվի նկատմամբ և գտնում է, վոր այդ անարգանքը կարելի չե մարդիկ միայն մեղավորների արյունով:

«Յես սուրբ ճշմարտություն եմ ուզում, հառուցում միայն անամոթ մեղքերի համար, յես ուզում եմ պատժել և վոչ թե վրեժխնդիր լինել, իսկ նրանց պատժել յես պարտավոր եմ, վորովհետև պատվի որևէ բանն այդ եմ պահանջում: Այսպիսի դեղքերում սովորաբար ամուսինն և սպանում թե կոչվել և թե վորդուն, բայց Լուկեյի մոտ Լուզովիկը դիմում է խորամանկության: Նա այնպես է անում, վոր վորդին սպանի կոչվել, իսկ

*) С. Мокшадский, нолն տեղը, էջ՝ 299:

հետո հրամայում է պալատականներին բանտարկել վարդուն և սպանել:

Լոպեն մարդկային կրքերը նկարագրելու մեծ վարպետ եւ վոր չափով անդիմադրելի յե կառանգրայի և Ֆրեդերիկի սերը, նույն չափով անուելի յե Լյուդովիկի խանգն ու դաժանությունը: Մարդկային կրքերը Լոպեյի մոտ նման են գարնանային դեպի, վոր դուրս գալով ավերից ամեն ինչ հեղեղում և տանում է և վորի դեմ վոչինչ չի կարելի անել:

Այս կարգի գործերի հետ միասին Լոպե դե Վեդան գրել է նաև այնպիսի պատմական դրամաներ, վորտեղ պատկերացրել է սպանական ժողովրդի ծանր կյանքն ու նրա ապստամբությունները հարստահարիչների դեմ: Այդ տիպի լավագույն գործը, վոր լայն ժողովրդականություն է վայելում, նրա «Ֆուենտե Ուիսեն-խուևա» դրաման է:

Այդ դրամայի թեման առնված և սպանական դյուղացիական կյանքի այն շրջանից, յերբ դյուղացիությունը ճնշվում եր առանձին ֆեոդալների ծանր լծի տակ և յերբ ֆեոդալների կառավարչականությանը չափ ու սահման չկար:

Այդպիսի ֆեոդալ սենյորներից մեկն է Ֆերնան Գոմես դե Գուսմանը, Ֆուենտե Ուիսենու գյուղի գերագույն ղեկավարը և ասպետապետը: Բավական չէ, վոր նա տղրում է դյուղացիների հաշվին, վորպես տիպիկ բռնակալ-ֆեոդալ: Նա վերին աստիճանի ցինիկ և աշխատելով մի մարդ է, վոր ամեն քայլափոխում հետապնդում է դյուղացիների կանոնց և աղջիկներին, առանց վում և բռնաբարում և նրանց: Նա այն խորին համոզմունքին է, վոր դյուղացին մոչ մի պատիվ չի կարող ունենալ և ամեն մի կնոջ ու տղջիկ համար մեծագույն պատիվն իրեն հանձնելն է: Բայց դյուղացիներն այլևս չկարողանալով տանել այդ բոլոր անարդարանքները, ապստամբվում են, տապալում բռնակալի իշխանությունը և սպանում նրան:

Դրամայի մեջ հասկապես սքանչելի յե արված ժողովրդական մասսաների բուռն ատելությունը ֆեոդալական կարգերի նկատմամբ: Դրամայի կենտրոնական հերոսը ժողովուրդն է: Կոմանդորի սպանությունից հետո, յերբ դատարանը հարցաքննություն է կատարում և վործում և հայտնաբերել բռնակալի կոնկրետ սպանողին, բոլոր հարցաքննվողները, նույնիսկ յերեխա-

ները, դատավորի այն հարցին, թե «Ո՞վ է սպանել կոմանդորին», պատասխանում են՝ «Ֆուենտե Ուիսենուան»: Լոպե դե Վեգան ժողովրդի այդ ընդլզումը նկարագրելու հետ միասին տալիս է նաև առանձին տիպեր: Նշանավոր խարակտերներից մեկը դեղջկուհի Լաուրենտիան է: Նա կոմանդորի գոհերից մեկն է, բայց միաժամանակ հերոսական կնոջ տիպը: Նա իր կրակոտ ճառերով ժողովրդին վտարի յե հանում բռնակալի դեմ և ինքը անձնապես մասնակցում է կռիվներին: Սքանչելի յե գծված նաև Լաուրենտիայի հոր՝ Եստվենի, այնուհետև Ֆրանցոսի և Մենգոյի տիպերը: Սրանք բոլորն էլ սպանական ժողովրդի լավագույն ներկայացուցիչներն են, ըմբոստ դյուղացիներ, վորոնք դուրս են գալիս ֆեոդալական կառավարչականությունների և անարդարությունների դեմ: Բոլորն էլ ցանկանում են մի բան՝ խաղաղ և ապահով կյանք:

Բայց Լոպե դե Վեգան դուրս գալով ֆեոդալների բռնության և կռամայակալությունների դեմ, թագավորին, միապետին հակադրում և նրանց: Լոպեն իր քաղաքական հայացքներով միատեսական է: Նրա ապստամբ դյուղացիների հիմնական լոզունգըն է՝ կորչի կոմանդորը, կեցցե թագավորը: Դեռ ավելին, նա կաստիլիայի թագավոր Դոն Ֆերնանդոյին և թագուհի Իսաբելին յոգեալակալանացնում է:

«Ֆուենտե Ուիսենուայի» ելական արժանիքն այն է, վոր այստեղ տրված է սպանական դյուղացիության տնտեսական և քաղաքական ծանր վիճակի ռեալիստական նկարագրությունը: Այդ դրաման պատկանում է յեվրոպական դրականության այն սակավաթիվ գործերի թվին, վորտեղ լայն ծավալով առաջին անգամ պատկերացված է ժողովրդական լայն մասսաների դժգոհությունն ու ապստամբությունը:

Լոպե դե Վեգան Վերածնության դարաշրջանի խոշորագույն հումանիստներից մեկն է: Չնայած նա իր հասարակական-քաղաքական հայացքներով կապված է յեղել իշխող դասակարգերի հետ, այնուամենայնիվ նրա մեծությունն այն է, վոր նա կարողացել է իր ստեղծագործությունների մեջ լայն ծավալով արտացոլել ժողովրդի դժգոհությունն ու ընդլզումը տիրող կարգի իր դեմ:

7. ՏԻՐԱՌ ԴԵ ՄՈՒԽԱ

(1571—1648)

Հասի դե Վեդայի ստեղծած ուղղութեան ամենափայլուն գեղեցիկից մեկը Տիրսոս դե Մուլինան էր, վորն իրեն համարում էր Հոգեյի աշակերտը:

Նա ծնվել է Մադրիդում, սովորել է Ալկալա դե Ենտրեսում, վորտեղ ստացել է փայլուն կրթութիւն: Այստեղ նա ստեղծասիրել է անտիկ դրականութիւնը և ծանոթացել է իտալական Վերածնութեան դարաշրջանի դրականութեանը: Այստեղ նա ուսումնասիրել է նաև աստվածաբանութիւնը:

1601 թվին նա ընդունում է հոգևոր կոչում և դառնում է «Գիտարութիւն» միաբանութեան անդամ: Այնուհետև հայտնի չէ, վոր 1613 թվին Տիրսոն, այդ նույն միաբանութեան հանձնարարութեամբ, մեկնում է Ամերիկա, վորտեղ վանականների համար կարգում է դաստիարակութիւններ աստվածաբանական թիմաների շուրջը և դադարում է վանական կյանքի կառուցման հարցերով:

Տիրսոս դե Մուլինայի գրական գործունեութիւնը նույնպես յեղել է շատ բնորոշ: Նա գրել է մոտ 300 գրքում, 12 նովելլա և այլ գործեր: Նրա այդ հակայական գրական ժառանգութեանից ապագրվել և մեկ հասել են 81 կոմեդիա, 5 հոգևոր դրամա և մի քանի նովելլա: Տիրսոն իր դրամաների աշխարհիկ բովանդակութեան համար պատասխանատվութեան և կանչվել հոգևոր իշխանութիւնների կողմից և նույնիսկ արքայից:

Տիրսոս դե Մուլինայի լավագոյն ստեղծագործութիւններից մեկը «Սեվիլյան չարամիսն կամ Բարե հյուրը» (1630 թ.) կոմեդիան է: Այդ գործը Դոն-ժուան առասպելի առաջին դրական վերամշակութիւնն է, վորով այնքան դադարել են թե՛ յեզրուպական և թե՛ ուսանական դրողները (Մուլինո, Դալտոնի, Բայրոն, Լենաու, Պուշկին, Ա. Տոլստոյ և ուրիշ շատերը):

Դոն-ժուան (այլևի ճիշտ Սուան) լիզենդի անունով հարցը յեզրուպական դրականութեան չլուսաբանված հարցերից մեկն է: Այն բոլոր հետազոտութիւնները, վոր կատարվել են մասնագետների կողմից, պարզել են, վոր նախ այդ լիզենդին իր բնութեով ժողովրդական է: Միջին դարերի ժողովրդական վորդ

պոեզիաների, ֆաբլիոնների և պատմվածքների մեջ, վորպես կենտրոնական հերոս, հանդես է բերվել մի այլասերված ազնվական, վերին աստիճանի կնամոլ և ցինիկ գծերով, վոր ամեն քայլափոխում գայթակղեցրել է բոլոր կանանց, չնայելով վոչ նրանց դիրքին և վոչ էլ սոցիալական վիճակին: Ժողովրդական լիզենդին բուռն աջ ազնվականին արվում է բացառական գնահատական:

Այնուհետև կան լիզենդներ, վորտեղ այդ նույն ազնվականը վտարվում իսկիցով գանգին, նրան ընթրիքի չի հրավիրում: Դանդըն ընդունելով հրավերը, նշանակված ժամանակին ներկայանում է, հետո ինքն է նրան հրավիրում ընթրիքի: Ինչ վերաբերում է արձանի պատմութեանը, ապա մասնագետները պարզել են, վոր արձանի մասին հիշատակութիւններ կան Արիստոտելի և Պլուտարքոսի մոտ:

Տիրսոս դե Մուլինայի դրամայի համար վորպես սյուժետ ծառայել է Դոն-ժուան Տենորիոյի պատմութիւնը, վորն ապրել է 14-րդ դարում:

Թագավորի հետ միասին իրեն նվիրելով անառակ կյանքի, Դոն-ժուան վախցնում է կոմանդոր դե Ուլլոայի աղջկան և սպանում է նրան: Դատարանը վոչ մի միջոց ձեռք չի առնում: Ֆրանցիսկյան միաբանութեան անդամները վորոշում են պատժել Դոն-ժուանին: Մի գեղեցիկ կնոջ անունից նրանք Դոն-ժուանին նամակ են գրում և ժամադրութիւն են նշանակում այն յեկեղեցում, վորտեղ թաղված է կոմանդորը: Սպանում են Դոն-ժուանին, հետո լուր տարածում, թե Դոն-ժուանին դժբաք է տարել կոմանդորի արձանը:

Դոն-ժուանը Տիրսոս դե Մուլինայի դրամայում հանդես է բերված վորպես մի այլասերված ազնվական, վորն իր կյանքի վոլջ նպատակն ու իմաստը տեսնում է կանանց գայթակղեցնելով մեջ: Դժուհի Իսաբելլայի հետ արկածներ ունենալուց հետո, նա գայթակղեցնում է ձկնորսուհի Տիսբեային: Այնուհետև նա փորձում է գայթակղեցնել իր ընկերոջ հարսնացու Դոննա Աննային, մենամարտում է նրա հոր հետ և սպանում է նրան: Դոն-ժուանը վախճելով գայթակղեցնում է գեղեցիկուհի Ամինտային: Վերագտնալով Սեվիլյան նա բռնում է իր ձեռքով սպանած կոմանդորի արձանի միրուքից և ընթրիքի չի հրավիրում նրան: Արձանը նշանակված ժամին ներկայանում է և իր հերթին Դոն-

ժողովին ընթերցելի և հրավիրում իր մոտ գտնվողները: Դոն-ժուանը ներկայանում է ընթերցելի և արձանի հետ միասին ընկնում է դժոխք: Թողտվորն իմանալով Դոն-ժուանի բոլոր արկածներին մասին, ցանկանում է պատմել նրան, բայց թաղափորին հայտնում են, վոր աստիճան արդեն պատմել է:

Դոն-ժուանի հիմնական դիժը, Տիրսո դե Մոլինայի մոտ, կնամոլությունն է: Իր նպատակին հասնելու համար նա վոչ մի միջոցի առջ կանդ չի օտնում: Հետաքրքիր է նշել, վոր դրամայի մեջ Դոն-ժուանը մեկնարանում է վորպես «համաժողովրդական չարիք»: Նա հավասար չափով «չարիք է» հասարակական բոլոր խավերի համար: Հետաքրքիր է նաև նշել, վոր նրա շորս զոհերը հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչներն են—Տիսբեա՝ ձկնորսուհի, Ամինտա՝ գեղջկուհի, Իսաբելլա՝ դրամուսուհի, Դոննա Աննան իր սոցիալական վիճակով ինչին ազնվականություն ներկայացուցիչն է: Բոլորի համար էլ Դոն-ժուանը «չարիք» է, բոլորն էլ գտնադարձում են նրան: Բայց չնայած սրան, հետաքրքիր է Դոն-ժուանի վերաբերմունքը դեպի իր զոհերը: Նա շատ վերից է նայում Ամինտային և Տիսբեային, հիմնվում է իր սպանական ծագման և բարձր դերքի վրա, նրանց համար բարձր պատիվ է համարում, վոր ինքը «սիրում» է նրանց և ցանկանում է ամուսնանալ: Իսաբելլային և Դոննա Աննային գայթակղեցնելու ժամանակ նա դիմում է ալ մեթոդների, վորոնք ավելի նուրբ են, խորամանկ և ձկուն: Բայց բոլոր գեղեցիկում էլ Դոն-ժուանը մնում է նույն գիշատիչ ավանդույթները:

Տիրսոյի մոտ արդեն կան ակնաբեկներ, վոր Դոն-ժուանը չի վախենում հանդերձյալ կյանքից: Ծիշտ է, այստեղ Դոն-ժուանը աթիստ չէ, ինչպես Մոլիերի մոտ, բայց այնուամենայնիվ վորոշ արհամարհական վերաբերմունք՝ դեպի հանդերձյալ կյանքը, նա հանդես է բերում:

Յերբ Դոն Դոնտադոն Դոն-ժուանին ասում է թե՛ ոտը ձեռքը և մի վախեցիր, նա պատասխանում է,—«Ինչ է, ծիծաղում ես ինձ վրա, յեթե դու նույնիսկ դժոխք լինեիր ինձ համար, վոչ մի նշանակություն չունի»: Բայց չնայած այդ բոլորին, այնուամենայնիվ մեռնելու ժամանակ նա խնդրում է, վոր քահանա բերեն մեղքերը բավելու համար:

Տիրսո դե Մոլինայի «Դոն-ժուանը» խոշոր դեր է խաղացել

Դոն-ժուանի՝ կերպարի հետագա վերամշակումների պատմության մեջ, ձիշտ է՝ հետագա վերամշակումները շատ կողմերով տարբերվում են Տիրսոյի Դոն-ժուանից, բայց հիմնական դերերից մեկը՝ կնամոլությունը, սկսածանվել է հետագա բոլոր վերամշակումների մեջ:

Տիրսո դե Մոլինան ունի նաև կոմեդիաների մի ամբողջ շարք, վորտեղ հերոսուհին հագուստները փոխելով հետապնդում է իր սիրած տղային և վերջի վերջո կարողանում է ամուսնանալ նրա հետ—«Սերը բժիշկ», «Խուան Ֆերնանդեսի վիլլան», «Ալամա կինը», «Գեղջկուհին Սագրիից», «Եղջկուհին Վաչեկասից»: Այս կարգի լավագույն կոմեդիան համարվում է «Դոն-Խիլ—կանաչ վարտիկ» (1635 թ.):

Այստեղ պատկերացվում է, թե ինչպես Դոննա Սուանտն փոխելով հագուստը, տղամարդու շորեր է հագնում, թողնում է ոտն է ընտանիք ու հետապնդում է իր սիրած տղամարդուն, և վերջի վերջո ամուսնանում է նրա հետ: Կոմեդիայում արվում է դրամի իշխանություն քննադատությունը:

Անհրաժեշտ է նշել, վոր աշխարհիկ բովանդակություն ունեցող այդ գործերի մեջ բավական ուժեղ տեղ են դրավում կաթոլիկական կրոնի դոգմաները: Տիրսոյի մոտ արդեն գրացվում է կաթոլիկական ուսուցիչի պալուստը և ուժեղացումը: Այս անակցիայի շրջանի ամենախոշոր դրամատուրգը Կալդերոնն էր:

Յ. ԿԱԼԴԵՐՈՆ

(1600—1681)

Դոն Կալդերոն Կալդերոն դե Լա Բարկան ծնվել է Մադրիդում, ազնվականի ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է ճիզվիտական դպրոցում, այնուհետև Սալամանկայի համալսարանում, ուսումնառելով և աստվածաբանություն, իրավաբանություն և մաթեմատիկա: Ուսումնառելու ավարտելուց հետո մտնում է զինվորական ծառայության, մասնակցում է Իտալիայի և Ֆլանդրիայի դեմ մղված պատերազմներին: Լուպե դե Վեգայի մահից հետո ստանում է պալատական դրամատուրգի կոչում, բայց նորից մասնակցում է մի շարք պատերազմների: 1651 թվին Կալդերոնն ընդունում է հոգևոր կոչում, 1663 թվին դառնում է ճիզվիտա-

կան արքայութեան ներքից մեկի ղեկավար, իրեն՝ ամբողջապէս նվիրում և հոգևոր գործունեութեան և գրում և վերագանցապէս հոգևոր դրամաներ:

Կալդերոնի դրական գործունեութեանը տեղեց հիսուն տարի: Այդ ժամանակաշրջանում նա գրել է 120 կոմիդիա, հարյուր հոգևոր դրամա, հարյուր ինտերմեդիա, բաղամթիվ պոեմներ, յերգեր, սոնետներ, ռումաններ և այլն:

Կալդերոնի ամենատիրած գրական ժանրերից մեկը յեղել է հոգևոր դրաման, վորոնք մեծ մասամբ ունեն այլաբանական բնույթ: Այն հոգևոր դրամաներին շատ են մոտենում նրա կրոնական դրամաները, վորտեղ գեղագանցապէս վերամշակվում էյին կաթոլիկական սյուստները: «Խաչի յերկրպագութեանը», «Ս. Պետրիկի քաղաքացի», «Կալուս քաղաքացի» և այլն: Կալդերոնի դրամաների մեջ հատուկ տեղ են պրավում նրա փիլիսոփայական դրամաները. այդ ֆարգի լավագույն գործը համարվում է «Այտնիք յերազ» դրաման: Կալդերոնը գրել է նաև կենցաղային դրամաներ, վորտեղ քննութեան են առնվում և լուծվում ֆեոդալական կաթոլիկական բարոյականութեան հիմնական հարցերը («Իր պատվի բշտամբն», «Գաղտնի վիրավորանքի համար գալտնի վրեժխնդրութեան»):

Կալդերոնն իր աշխարհայացքի բոլոր հիմնական կողմերով սերտորեն կապված է ազնվականութեան և կաթոլիկականութեան հետ: Հին պոտոմաբաններն իրավացիորեն նրան համարել են կաթոլիկական գրող: Նրա դրամաների ճնշող մեծամասնութեան թեման կրոնն է, հավատը, կրոնական եքստազը:

«Կալուս քաղաքացի» դրամայում պատկերացված է, թե ինչպէս փորթուգալական թագաժառանգ դոն Ֆերնանդոն, «անհավատների» դեմ արշավանալից մեկի ժամանակ գերի յե ընկնում: Մալրիտանական թագավորը խոստանում է նրան. ազատել գերութեանից միայն մի պայմանով. յեթե դոն Ֆերնանդոն Սեուտա քաղաքը նրան տա: Փորթուգալական թագավորը հաժաձայն է այդ պայմանին, միայն թե ազատի Ֆերնանդոյին: Բայց վերջինս նույնիսկ չի ցանկանում լսել այդ մասին: Նա չի կարող հաշտվել այն մտքի հետ, վոր «քրիստոնեական քաղաքը» տրբվի «անհավատներին»: Մալրիտանական թագավորը զայրանալով, հրամայում է շղթայել Ֆերնանդոյին և ստիպում է նրան,

վար համբուրել իր վտաքերը: Դոն Ֆերնանդոն տանում է բոլոր ստանալաները «հավատի» համար: Նրա ուժերն արագորեն սղաւվում են, հիվանդութեանը հյուսում է նրան, նրան զնդանից հանում և նետում են փողոց: Նա փողոցում աչքաւս անում է, տեսողները ծիծաղում են նրա վրա և անարգում: Մալրիտանական թագավորը նորից և առաջարկում նրան զիջել քաղաքը, բայց Ֆերնանդոն խնդրում է նրան միայն մի բանի մասին. թողնել վտր ինքը հանգիստ: մեռնի: Ֆերնանդոն մահանում է հենց այն ժամանակ, յերբ զինվորները յեկել էյին նրան ազատելու:

Այսպիսով Ֆերնանդոն իդեալականացվում է Կալդերոնի կողմից. դառնում է հավատի նահատակ: Դրամայի մեջ խոշոր դեր է խաղում վոշ իրական պլանը, գերբնական ուժերի մասնակցութեանն հյական տեղ է գրավում:

Ամբողջ դրամայի մեջ ցայտուն կերպով արտահայտվել է Կալդերոնի կրոնական մոլեռանդութեանը:

Նույն սկզբունքը ցայտուն կերպով արտահայտվել է նաև «Ս. Պետրիկի քաղաքացի» դրամայում:

Դրաման կառուցված է Ս. Պետրիկի և Լյուդովիկո Ենիոի հակադրութեան սկզբունքի վրա: Հոգևոր, ասկետական կյանքը հակադրվում է սեւալ կյանքին, չորացած ծերուկը. կենսուրախ յերիտասարդին: Ս. Պետրիկը, Ֆերնանդոյի նման, յեթաղկվում է ամեն տեսակ ստորացումների, վորովհետև նա քրիստոնեյութեան և քաղաքում հեթանոս իռլանդացիների մեջ, հրաշքներ և դրոշմ, կենդանացնում է սպանված կնոջը: Լյուդովիկոն վաւործում, կենդանացնում է սպանված կնոջը: Լյուդովիկոն վաւործում է կյանքի բոլոր գեղեցկութեանները: Ծիշա է, նրա քայլերը վերջանում են մենամարտով ու փախուստով, բայց այնուամենայնիվ այս բոլորը չեն ազդում նրա կենսուրախ արամաւորութեան վրա: Նրան շատ անհանգստացնում է մի անհայտ մարդ, վոր ամեն քայլափոխում հետապնդում է նրան:

Վերջապէս, յերբ Լյուդովիկոն նրա վրայից մի կողմն է նետում թիկնացը, տեսնում է իր առաջ կանգնած և կմախք: «Յես Լյուդովիկո Ենիոն եմ» բացատրում է կմախքը և անհետանում: Այս առիթն այնպէս է ցնցում նրան, վոր նա սկսում է վորոտել քաղաքանի ճանապարհը և հետևում է Պետրիկին: Վերջինս քաղաքանում Լյուդովիկոն, վոր անցել է քաղաքանով, վերադառնալով:

նում և յերկիր և պատում և անդրշիրիմյան աշխարհում իր տեսած հրաշքների մասին:

Նույն կրոնական միասնական թեմաներին հանդիպում ենք նաև Կալդեերնի փիլիսոփայական գրամաներում:

«Այսպես յերազ է» գրամայում թագաժառանգ Սեխիզմունդուն ծնված որից պահում են հասարակությունից մեկուսացած վիճակում, վորովհետև թագավորն ստալերի շարժումից դուշակել և վոր իր վորդին լինելու յե դաժան միապետ Սեխիզմունդուն անիծում և իր կյանքը և նախանձում և թաշունհերին ու ձկներին, վորոնք ազատ են: Այդ ժամանակ հայրը նրան մի որ ազատություն և առլիս, վորպեսզի ստալի, թե վորդին ինչպես և իրեն պահելու: Սեխիզմունդուն արթնանալով պալատում, իրեն շրջապատված տեսնելով պալատական հասարակությամբ, կարծում և, թե յերազ և տեսնում: Այստեղ նա դրսևորում և իր վատ վարքագիծը, սպանություն և կոտորում: Նրան նորից տանում են իր նախկին մեկուսանոցը: Սեխիզմունդուն վաղիս և այն յեղճակացության, վոր ապրել նշանակում և յերազ տեսնել: «Բնում և թագավորը և նրան թվում և, թե ինքը թագավոր և և նա ապրում և այդ պատրանքով: Բնում և աղքատը, յերազ և տեսնում իր աղքատության մասին, յերազ են տեսնում բոլոր նրանք, ովքեր մի բան են ցանկանում: Բոլորը աշխարհի մեջ քնում և յերազ են տեսնում: Ի՞նչ և կյանքը—խեղազարություն: Ի՞նչ և կյանքը. սխալմունք, տեսիլ, հնարանք, վորովհետև կյանքը—յե-րազ է»:

Յերբ Սեխիզմունդուն դալիս և այս յեղրակացության կյանքի մասին, զինվորներն իմանալով, վոր թագաժառանգը գտնվում և կալանքի տակ, ապստամբվում և պահանջում են, վորպեսզի նա իշխանությունը վերցնի իր ձեռքը:

Սեխիզմունդուն վերադառնում և կյանք, բայց այս անգամ նա հանդես և բերում մեծ զգուշություն:

Այսպիսով գրամայի մեջ իրական կյանքը հակադրվում և յեղնային կյանքի հետ, առաջինը համարվում և յերազ, վոչ հյալան և վոչ կարևոր: Ռեալ կյանքը—յերկնային—հավիտենական կյանքի պոսեկցիան, և միայն և ուրիշ վոչինչ: Կալդեերնի կրոնական մոլեբանդությունը հասնում և մինչև այն աստիճանի

վոր նա հայտարարում և, թե «մարդու ամենամեծ հանցաքն այն և, վոր նա ծնվել է»:

Բայց չի կարելի Կալդեերնի գրական վոչ ժառանգությունը համարել կաթոլիկական ռեալիստի որոհայտություն: Նա ունի նաև այնպիսի գործեր, վորտեղ կրոնական միստիցիզմը վոչ մի գեր չի խաղում և վորտեղ նա ալիլ և ժողովրդական կյանքի նկարագրության հետ միտին նաև ֆեոդալական կա-մայականությունների ուժեղ քննադատությունը: Այս կարգի լատվությունը գործը «Սալամեյան Ակալանդ» է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ա) Տեխնիք

1. „Жизнь Ласарильо из Тормеса, его беды и несчастья», перевод, статья и комментарии К. Н. Державина. Изд. «Academia», 1933 г.

2. Сервантес «Хитроумный идальго Дон-Кихот», перевод, под редакцией и с вступительными статьями Б. А. Кржевского и А. А. Смирнова. I, II т.т., «Academia», 1932 г.

3. Նույնը, «Назидательные Новеллы». Перевод и примечания Б. А. Кржевского, вступительная статья Ф. Келлиана, «Academia», 1934 г.

4. Նույնը, Драматические интермедии, перевод А. Н. Островского.

5. Лопе де Вега, Собр. соч. I, II, III т.т. СПб., 1913—14 г.

6. Тирсо де Молина, «Театр», изд. «Academia», 1935 г.

7. Калдерон, Сочинения в переводе К. Бальмонта. I, II, III т.т., 1900—12 г.

8. Камонес, «Лузиады», СПб., 1897 г.

9. Պուերիլի և Մակուլիու քրեատոմատիաների համապատասխան գլուխները:

1. Д. Келли, «Испанская литература», Гиз., М., 1923 г.
2. Д. Тиннор, «История испанской литературы», 1888—1891, М.

3. К. Н. Державин, «Дон-Кихот», Л., 1934 г.

4. Կոզանի, Լուսնաշարուիւ և Գիդդիի զատագրքերի համապատասխան գլուխները:

Այս մասը կազմելու ժամանակ ոգտագործված է նաև Հաուպտի գիրքը.—Haupt, A., «Geschichte der Kenaissance in Spanien und Portugal», Stuttgart, 1927.



16 և 17-րդ դարի սպանական և փորթուգալական գրականությունը	3
1. Ասպետական վեպը	6
2. Լուիս Կամոնես	8
3. «Novela picaresca»	12
3. Մերվանտես	20
5. Թատրոնը և դրամատուրգիան	60
6. Լոպե դե Վեգա	64
7. Տիրսո դե Մոլինա	70
8. Կարդերոն	73
Գրականություն	77

Խմբագիր՝ Ս. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Տեխ. խմբ. ինժ. Ս. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Մշակույթի ն. ԳԵՏՐՈՍՅԱՆ

Գլխավոր լրագրող՝ Ե. ԿՈՍՏՆՅԱՆ, պատվեր 213, տիրաժ 1000

Հանձնված է արտադրության 1 հունիսի 1940 թ.

Ստորագրված է տպագրելու 5 հուլիսի 1940 թ.

Մանկ. Ինստիտուտի տպարան, Յերեվան, Մարքոսի փ. 17, 1940

ՀՀ Ազգային գրադարան



NL0168140

ԳԻՆԸ 3 Ռ.

Օ. МАМИКОНЯН

**ЕВРОПЕЙСКОЙ ЛИТЕРАТУРЫ
ЭПОХИ ВОЗРОЖДЕНИЯ**

Вып. III

Изд. Пед. Института. Ереван 1940 г.